Azg

Azg armenian daily

2 ՕԳՈՍՏՈՍ 1997. ՇԱԲԱԹ #144 (1399)

Մինսկը նոտա է հղել Մոսկվային

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՓՍՍՏ. Այսօր նախատեսվում էր Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի այցը Կալինինգրադի մարզ: Սակայն այն անորոշ ժամանակով հետաձգվեց: Կալինինգրադի նահանգապետ Լեոնիդ Գորբենկոյի խնդրանքով: Նահանգապետն իր հայրենադարձաբանել է ՕՊՏ հեռուստաընկերության լրագրողների ծերբակալման շուրջ ստեղծված սկանդալային իրավիճակով: Բելառուսի ղեկավարությունը այդ միջադեպը գնահատեց որպես Ռուսաստանի կողմից ճնշում Բելառուսի իշխանությունների վրա, ինչը հակասում է միջազգային նորմերին: Բելառուսի արտաքին գործերի նախարարությունը նոտա է ներկայացրել Ռուսաստանի արտգործնախարարություն՝ ստեղծված իրավիճակի բացատրություն պահանջելով:

Վրաստանը առաջարկում է խաղաղապահների հարցը քննել ԱՊՀ ղեկավարների խորհրդում

ԹԲԻԼԻՍԻ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աբխազիայում ռուսաստանցի խաղաղապահների հետագա գտնվելու նպատակահարմարության հարցը պետք է քննարկել ԱՊՀ պետությունների ղեկավարների մոտակա խորհրդում: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այսպիսի կարծիքի է հանգել Վրաստանի ազգային անվտանգության խորհուրդը, որն այսօր արտահերթ նիստ անցկացրեց:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԽՈՐԺԱԿՆԵՐ

Բյուլենթ Էջեւիթն առաջարկում է էլ ավելի փոքրացնել Հայաստանի տարածքը

ԵՐԵՎԱՆՊ ԱՇՈՏՅԱՆ

Թուրքիան Հայաստանի տարածքի 90 տոկոսն իր ձեռքում պահելով՝ ցանկանում է մնացած 10 տոկոսի շուրջ բանակցել Հայաստանի կառավարության հետ: Բայց Հայաստանն իր գոյության ամենափոքր տարածքի տերը դառնալով՝ այլեւս նահանջելու տեղ չունի եւ պետք է ամեն գնով պայքարի բոլոր տեսակի ոտնձգությունների դեմ:

Հարցը դարձյալ բարձրացվել է Թուրքիայի իշխող քաղաքական շրջանակներում, որովհետեւ աշխարհաքաղաքական այն դաշտությունը, որը երիտասարդ Թուրքերին մղեց իրագործելու մեր դարի առաջին ցեղասպանությունը, դեռեւս կենսունակ եւ իրագործելի է մնում նաեւ այսօրվա Թուրքիայի տեսության կայսերական ծրագրերում: Թալեաթ, Էնվեր եւ Ջեմալ փաշաները փորձեցին Հայաստանը արել աշխարհի երեսից եւ ընդարձակել Օսմանյան կայսրությունը մինչեւ Կենտրոնական Ասիա: Իր այդ երազանքի հետեւանքներն ամենաարհիվ էնվեր փաշան մոտակայքում: Այսօր խորհրդային Միության փլուզումով Թուրքիան նոր ավյուն է սկսում պանթուրքական իր ծրագրերին եւ ըստ երեւույթին դարձյալ Հայաստանն է իր փոքր տարածքով խոչընդոտ հանդիսանում:

Թուրքիայի փոխվարչապետ նշանակվելուց հետո Բյուլենթ Էջեւիթի նպատակն է հրապարակայնորեն խոսել այդ գաղափարը: Էջեւիթը վստահելի քաղաքական գործիչ է: Իր ձախակողմյան սոցիալիստական դիմակի տակ նա մարմնավորում է Թուրքիայի ամենակատաղի քաղաքական բնազդները: Նա էր 1974-ի օգոստոսին Կիպրոսի թուրքական նվաճման «ճարտարապետը» եւ հերոսը: Թուրքական զավթիչ բանակը կղզու բնակչության ընդամենը 18 տոկոսը կազմող թուրքերի շահերը պաշտպանելու պատրվակով մինչեւ օրս իր հսկողության տակ է պահում Կիպրոսի տարածքի 39 տոկոսը:

Տես էջ 3

Հակահայ հուշարձան է կառուցվելու Իգդիրում

Թուրքական «Ենի Ասիա» թերթի համաձայն, ինչպես վկայում է Պոլսում հրատարակվող «Ժամանակ» օրաթերթը, Իգդիրի կուսակալության նախաձեռնությամբ շուտով կառուցվելու է հուշարձան, որը «խորհրդանշելու է 1917 թ.-ին հայերի կողմից կատարված վայրագությունները»: Կուսակալ Շեմսեթթին Ուզունը հայտնել է, թե նահանգի Օբա գյուղում կառուցվելիք հուշարձանը պիտի ունենա 32 մետր բարձրություն եւ տեսանելի պիտի լինի նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանից: Կուսակալը մի բան էլ է ավելացրել՝ հուշարձանը կառուցվելու է նախիջեւանցի (անշուշտ ադրբեջանցի թուրք) ճարտարապետի կողմից:

Շեմսեթթին Ուզունի ասելով, այս չնախադեպ գաղափարը ծագել է դեռեւս 1986 թ.-ին, երբ շրջանում հայտնաբերել են «1917 թ.-ին հայերի կողմից իրագործված վայրագությունների զոհ թուրքերի հավաքական գերեզմաններ», իսկ որոշումը կայացվել է 1995 թ.-ին «Պատմական իրողություններն ու հայերը» թեմային նվիրված գիտաժողովի ընթացքում:

Իր հայտարարության վերջում կուսակալը, երեւի ակամա, բացահայտում է հուշարձանի կառուցման բուն նպատակը՝ «հայերը հուշարձաններ են կառուցել ամենուրեք, մոռնալու համար թուրքերին»: Ուրեմն իրենք էլ կառուցում են, որպեսզի մոռանան հայերին: Ցեղասպանությունը որքա՞ն հասարակ բան է թուրքերի համար:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

64 կոնգրեսականներ դիմեցին Քլինթոնին՝ չհաջողվեցել Հեյդար Ալիեւին

Ուրբաթ օրը Հեյդար Ալիեւի ամերիկյան այցելության ասեղային ժամն էր: Ադրբեջանի նախագահն առաջին անգամ մտավ Սպիտակ տան շեմքեր եւ ձվածեւ գրասենյակում երեւանի ժամանակով ժամը 19:40-ին հանդիպեց նախագահ Բիլ Քլինթոնին: Այնուհետեւ, ժամը 22:10-ին Ռուզվելտի սրահում երկու նախագահներ կստորագրեն ամերիկա-ադրբեջանական համատեղ հայտարարություն, որից հետո ԱՄՆ-ի փոխնախագահ Ալ Գորը Ալիեւի հետ ներկա կգտնվի էներգետիկայի բնագավառում ամերիկա-ադրբեջանական համագործակցության պայմանագրի ստորագրմանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

Երեկ Հեյդար Ալիեւը հանդիպեց ԱՄՆ-ի պաշտպանության, էներգետիկայի եւ առեւտրի նախարարների հետ: Հանդիպումներից հետո Մ. Նահանգների առեւտրի նախարարության ներկայացուցիչը հայտարարեց, թե իր նախարարությունն այս տարվա վերջին գրասենյակ է բացելու Ադրբեջանում ամերիկյան գործարարներին օգնելու նպատակով:

Տես էջ 8

Մահացավ Սվյատոսլավ Ռիխտերը



ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

1 ՕԳՈՍՏՈՍ, «ԱՇՈՏՈՒԹՅՈՒՆ»: Աշխարհահռչակ դաշնակահար Սվյատոսլավ Ռիխտերն այսօր ստի կաթվածից մահացավ մերձմոսկովյան իր տանը, 82 տարեկան հասակում:

Թուրքիայի դիմումին ՅՈՒՆԵՍԿՕ-ն կդատասխանի հոկտեմբերին

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օսմանյան կայսրության 700-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո նշելու վերաբերյալ Թուրքիայի դիմումը քննվելու է այդ կազմակերպության գործադիր կոմիտեի հոկտեմբերին կայանալիք նիստում, իսկ վերջնական որոշում կայացվելու է հոկտեմբերին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնֆերանսում: Այս մասին «Նոյյան տապան» գործակալության թղթակցին հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ կապերի վարչությունից:

Չեչնիան կարեւորում է կովկասյան տարածաշրջանը

Մասխադովը կայցելի Հայաստան

Ինչպես հաղորդում է «Նեզավիսիմայա գազետան», հուլիսի 31-ին Թբիլիսի է ժամանել Չեչնիայի փոխվարչապետ Ահմեդ Զաֆաեւը: Վերջին մեկուկես ամսվա ընթացքում սա նրա երկրորդ այցն է Վրաստան: Զաֆաեւը մտադիր է հանդիպել Վրաստանի ղեկավարության հետ, քննարկել Թբիլիսի-Գրոզնի փոխհարաբերության հիմնահարցերը, ինչպես նաեւ Կովկասում եւ տարածաշրջանում իրադրության կայունացմանը նպաստող անհրաժեշտ միջոցառումները:

Զաֆաեւի այցը Թբիլիսի պետք է գնահատել որպես Չեչնիայի նախագահ Ասլան Մասխադովի առաջիկա այցի նախապատրաստություն: Վերջերս Չեչնիայի նախագահը հայտարարել էր Թբիլիսի, Երեւան եւ Բաքու այցելելու մտադրության մասին: Ավելի վաղ Ա. Մասխադովը հայտնել էր, որ Վրաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների բարելավումը Չեչնիայի առաջնահերթ խնդիրներից է:

Հնարավոր է, որ մոտ ժամանակներս Չեչնիան եւ Վրաստանը պայմանագիր կնքեն համագործակցության վերաբերյալ:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ռամազան Աբդուլատիպովը՝ Ռուսաստանի փոխվարչապետ

ՄՈՍԿՎԱ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օգոստոսի 1-ին ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով Դաղստանից Պետդումայի պատգամավոր Ռամազան Աբդուլատիպովը նշանակվել է Ռուսաստանի փոխվարչապետ: Այս մասին նախագահն ինքն է հաղորդել լրագրողներին վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինի հետ զրույցից հետո:

Ինչպես նշում են ռուսաստանյան աղբյուրները, այս նշանակումը Ելցինն անվանել է ոչ սովորական կադրային փոփոխություն եւ պարզաբանել, որ Աբդուլատիպովը զբաղվելու է գործառնական հարաբերությունների հարցերով, դաշնային էներգետիկայի զարգացմամբ եւ տարածաշրջանային խնդիրներով: Վ. Չեռնոմիրդինը Աբդուլատիպովին բնութագրել է որպես զարգաց մասնագետի:

Նախորդ գումարման ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Ռամազան Աբդուլատիպովը կոմունիստական վարչակարգի ժամանակ եղել է ԽՄԿԿ միջազգային հարաբերությունների բաժնի վարիչի տեղակալ եւ ազգերի ինքնորոշման սկզբունքի հակառակորդ:

Սիրիայի նախագահը Թեհրանում

ԹԵՀՐԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը հուլիսի 30-ին ժամանել է Թեհրան: օդանավակայանում նրան դիմավորել է Իրանի նախագահ Ալբար Հաշեմի Ռաֆսանջանին: հաղորդել է IRNA գործակալությունը: Սա 1979 թ.-ի իսլամական հեղափոխությունից ի վեր Սիրիայի նախագահի Իրան կատարած երկրորդ այցելությունն է: Ասադին ուղեկցում են Սիրիայի փոխնախագահ Աբդել Հալիմ Խադամը, արտգործնախարար Ֆարուք ալ Շարան եւ զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներ:

Բանակցությունների ընթացքում քննարկվել են տարածաշրջանային հիմնահարցերն ու Թեհրան-Դամասկոս հարաբերությունները: Գործակալությունը հիշեցնում է, որ Սիրիան Իրանի ամենահավատարիմ դաշնակիցն է արաբական աշխարհում:

ԹՈՒՐՔ ՍԱՍՈՒ

Ժիրայր Լիպարիտյանի կարծիքով՝ Ռուսաստանն ամենեւին էլ չի պաշտպանում հայերին

ՍՏԱՄԲՈՒԼ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ջումհուրիեթ» թուրքական թերթի աշխատակից Լեյլա Թավշանջոլուն, որը վերջերս Ստամբուլի Հունաց պատրիարք Բարթողիմեոսին ուղեկցում էր Հայաստան կատարած այցելության ժամանակ, հրապարակել է Հայաստանի նախագահի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի հետ ունեցած բավականին ընդարձակ մի հարցազրույց: Թավշանջոլուն հիշեցնելով, որ Լիպարիտյանը Թուրքիայի նկատմամբ Հայաստանի վարած քաղաքականության պատասխանատուն է, հարցնում է, թե արդյո՞ք այդ պատճառով նա Հայաստանում չի դառնում հակազդեցությունների թիրախ եւ դրանք չե՞ն դժվարացնում նրա գործը:

Լիպարիտյանը հաստատել է այդ կարծիքը: Ըստ նրա, Հայաստանում որոշ շրջանակներ տարակուսում են, թե արժե՞ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատել, քանի դեռ այն չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Բացի այդ, Թուրքիան ներկայումս շրջափակում է կիրառում Հայաստանի դեմ: Ինչու հարաբերություններ զարգացնել մի երկրի հետ, որն անցյալում հայերի դեմ է եղել եւ այսօր էլ շարունակում է այդպիսին մնալ: Պրն Լիպարիտյանն ունի նաեւ անձնական դժվարություն, ասվում է հարցազրույցում: Մարդկանց մեջ տարածուած է առաջացնում այն հանգամանքը, որ Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմամբ զբաղվում է Սփյուռքի հայտնի պատմաբաններից մեկը, որը շատ է գրել ցեղասպանության եւ դրա հետեւանքների մասին: Խոսելով այդ բարդությունների մասին, որն Լիպարիտյանն ավելացրել է, որ «Հայաստանն այսօր ցեղասպանության ճանաչումն իբրեւ պայման չի դնում»... եւ ընդգծել, որ այդ հարցում նախագահն իր հետ համակարծիք է:

Տես էջ 2

տեղական

Սկիզբը էջ 1

Հիմնական բաղադրությունը. նախագահի գլխավոր խորհրդականի կարծիքով, կառված է ծայրահեղ ազգայնականների ու կոմունիստների հետ: Վերջիններս ռուսամետ դիրքորոշում ունեն եւ դեմ են Թուրքիայի հետ լավ հարաբերություններ հաստատելուն: Ինչ վերաբերում է ծայրահեղ ազգայնականներին ու դաշնակցականներին, ապա այդ հարցում կա նույնիսկ «կյանքի անապահովություն»: Բայց Լիդարիսյանը կարծում է, որ ժողովրդի մեծ մասը կողմնակից է նախագահի հաղթականությանը: Հայաստանն անկախացման օրից ի վեր ջանում է բարիդրացիական հարաբերություններ ստեղծել իր բոլոր հարեւանների հետ: «Սակայն Թուրքիան իրականացնում է մի հաղթականություն, որով ոչ միայն նեցուկ է կանգնում Ադրբեջանին, այլեւ Հայաստանի դեմ շրջափակում է կիրառում, ինչն էլ հեռզիեն վտանգում է Լեռն Տեր-Պետրոսյանի վարած հաղթականությունը»:

ՀՀ նախագահի գլխավոր խորհրդականը գտնում է, որ եթե Թուրքիան շարունակի այսօրվա իր հաղթականությունը, ապա Հայաստանում ընդդիմադիրները հեռզիեն ավելի շատ կողմնակիցներ կգտնեն հանրության շրջանում: Անդրադառնալով դարաբաղյան հակամարտության հարցում Մինսկի խմբի համանախագահների առաջարկներին վերաբերող լրագրողի հարցերին Լիդարիսյանն ասել է, թե չի կարող բացատրություններ տալ, բայց կարող է հավատալ, որ երկու կողմից էլ զիջումներ են դրսևորվում: Տեր-Պետրոսյանը գանկանում է, որ այս ամենը գաղտնի դահլիճ, ասել է նախագահի խորհրդականն ու ավելացրել, որ դա ամենեին էլ չի նշանակում, թե դավադրություն է դրսևորվում: Հրաժարվելով բացատրություններից Լիդարիսյանը նշել է, որ օգերիներն այդ բանն անելով վտանգում են բանակցությունները: «Իսկ Հայաստանը չի կարող մանրամասություններ հաղորդել, որովհետեւ դրա երկիր է: Եթե մենք էլ սկսենք դրան հայտարարություններ անել, այն ժամանակ մրնոլորտը կբունավորվի, ու բանակցությունները կընդհատվեն»:

Լրագրողի այն հարցին, թե արդյո՞ք երբ համանախագահները կցանկանան դեյթոնյան գործընթաց կիրառել Հայաստանի ու Ադրբեջանի նկատմամբ, Լիդարիսյանը բացասական դասասխան է տվել, պարզաբանելով, որ «մեր դեպքում խնդրո առարկա է հայացքը հառում ենք դեպի ուրիշ երկրներ: Եթե Թուրքիայի հետ բնականոն հարաբերություններ հաստատենք, արդյո՞ք կլինի ռուսական բազաների կարիքը:

Հունաստանի հետ անվտանգության ոլորտում համագործակցությանը վերաբերող հարցին Լիդարիսյանը դասասխանել է, որ «այն շատ անկարեւոր համաձայնություն է»: Ըստ նրա, Թուրքիա-Ադրբեջան համաձայնությունը դրանից տասնապատիկ ավելի կարեւոր է: Այն հարցին, թե Ռուսաստանը դաշտանու՞մ է արդյոք հայերին, Լիդարիսյանն դասասխանել է, թե դա անիմաստ դնդում է: «Եթե Ռուսաստանը հայտնում է, որ դարաբաղյան հարցը կլուծվի միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության դահպանման հիման վրա, ապա ինչպե՞ս կարելի է դնդել, թե նա հայերին է դաշտանում: Մենք դա որակում ենք ի նպաստ Ադրբեջանի արված հայտարարություն եւ հակահայկական հաղթականության արտահայտություն», ասել է նա: Լրագրողը վել է նաեւ հետեւյալ հարցը. «Ճի՞շ է, արդյոք, որ Հայաստանը մերժել է թուրքական Թուրսել ընկերության հարմարագույն առաջարկները Հայաստանի հեռուստահաղորդակցության (ըստ «Մարմարա» թերթի բարգմանության թելեհաղորդակցության) համակարգի համար սկսված արտավում եւ ճի՞շտ է, որ առաջարկները մերժվել են միայն այն դատճառով, որ ընկերությունը թուրքական էր»:

Պրն. Լիդարիսյանը դասասխանել է, որ նախ, ինքը տեղյակ չէ այդդիսի առաջարկներից, այնուհետեւ ավելացրել է, որ «հավանական չէ, որ թուրքական որեւէ հաստատություն մասնակցի ու Հայաստանը մերժի նրան»:

Հավանաբար, բդքակիցը նկատի ուներ «ԱրմենՏել» հեռախոսային ընկերության վաճառքի համար առաջարկված միջազգային մրցույթը: Այս բնագավառում որեւէ այլ «արտավ» Հայաստանը չի անցկացրել: Թե ովքեր են հայտ ներկայացրել այդ նդատակով հայտարարված մրցույթին, առայժմ չի հրադարակվել:

Ժիրայր Լիդարիսյանի կարծիքով՝ Ռուսաստանն ամենեին էլ...

Նոյեմբերանի աղեսի հետեւանքների վերացումը՝ օրախնդիր

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարչապետ Ռոբերտ Քոչարյանի Տավուշի մարզ կատարված այցի արդյունքներն, ինչպես նաեւ վերջերս Նոյեմբերյանում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքների ընթացքը քննարկվեցին երեկ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում, որին մասնակցում էին ֆինանսների եւ էկոնոմիկայի, տարածքային կառավարման, կապի, բնապահպանության, քաղաքաշինության, կրթության եւ գիտության նախարարները, արտակարգ իրավիճակների վարչության պետը, Տավուշի մարզպետը, դատասխանատու այլ անձինք:

Քննարկելով այցի արդյունքներն ամփոփող արձանագրությունը, խորհրդակցության մասնակիցները հատկապես անդրադարձան դեպական դատվերով նախատեսված օբյեկտների շինարարության ֆինանսավորման, հակասողանային միջոցառումների իրականացման, Ոսկեդար գյուղի հեռուստահաղորդումների ադահովման, ինչպես նաեւ մարզի որոշ գյուղերի ջրամատակարարման հիմնախնդիրներին եւ դրանց լուծման հնարավորություններին: Հատուկ կարեւորվեց ռազմավարական նշանակություն ունեցող Կիրանց-Ոսկեդար եւ Իջեւան-Բերդ ավտոճանապարհների վերանորոգման հարցը: Խորհրդակցության ընթացքում նշվեց, որ որոշ օպերատիվ հարցեր արդեն իսկ լուծվել են:

Քննարկումների արդյունքում համապատասխան նախարարություններին տվեցին կոնկրետ հանձնարարականներ, ինչպես նաեւ ճշտվեց արձանագրությամբ նախատեսվող միջոցառումների իրականացման ժամանակացույցը:

Անդրադառնալով Նոյեմբերյանում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքների վերացմանը, վարչապետ Ռոբերտ Քոչարյանը շեշտեց, որ առաջնահերթ խնդիր է կենսապահովման օբյեկտների արագ վերականգնումը: Նա, միաժամանակ, հանձնարարեց երկրաշարժի հետեւանքների վերաբերյալ ներկայացնել ամփոփ տեղեկանք:

ՀՀ վարչապետի մամուլի գրասենյակ

Օգոստոսին կսեփականաշնորհվի 138 ձեռնարկություն

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Օգոստոսին կկայանա ընդհանուր առմամբ 138 ձեռնարկության սեփականաշնորհում, որն անհատդեղ մեծ թիվ է Հայաստանում սեփականաշնորհման անցկացման ողջ ժամանակաշրջանում: Այդ ձեռնարկությունների թվում են Չարենցավանի «Ավտոնույլ», «Երեւանի կերամիկական իրերի կոմբինատ», «Վիտամինների գործարան», «Էլեկտրաշարժիչ» Գյումրիի հղկող հաստոցների, Վանաձորի «Ավտոգենմաշ» եւ այլ ձեռնարկություններ:

Հիշյալ ձեռնարկությունների թվում կառավարության կողմից առավել բանկ են գնահատվել երկու հացի գործարաններ՝ Երեւանի թիվ 7 եւ Գյումրիի գործարանները: Դրանցից առաջինի արժեքը գնահատված է մոտ 5,74 մլրդ դրամ (նույնպես ռեկորդ է սեփականաշնորհման ողջ ընթացքի համար), երկրորդինը՝ 1,04 մլրդ դրամ: Նախկինում սեփականաշնորհման դրված ձեռնարկությունների արժեքի գնահատականը հազվադեպ էր գերազանցում 600 մլն դրամը: Մասնավորապես, օգոստոսյան ցուցակում հացի հետ չդառնչվող ձեռնարկությունների թվում բոլորից բարձր է գնահատված Վանաձորի «Ավտոգենմաշը»՝ 1,09 մլրդ դրամ:

Հիշյալ ցուցակից 7 ձեռնարկության բաժնետոմսերի բաց բաժանորդագրության ժամկետը ավարտվեց օգոստիսի 1-ին: ՀՀ կառավարության անուղղի կենտրոնից հայտնեցին, որ դրանցից 6-ի սեփականաշնորհումը հաջողվել է: Մասնավորապես սեփականաշնորհվել է Այրումի դահածոների գործարանը:

«31-Ի» ԳՈՐԾ

Դատախազի ճառը՝ օգոստոսի 5-ին

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «31-ի» դատավարությունում սկսվում է դատական վիճաբանությունների փուլը: Նախապատրաստվելու համար ավելի քան մեկ ամիս ժամանակ խնդրած դատախազը օգոստոսի 1-ին դեպ է հանդես գար մեղադրական ճառով: Երկու տարի առաջ նույն օրը սդանվել էին Երեւանից դուրս գենք տեղափոխող մեքենաները կանգնեցրած միլիցիայի երկու աշխատակիցները: Գուցեն դատահական զուգադիդությամբ էր համընկել գործով անցնող սդանությունների եւ մեղադրական ճառի ընթերցման օրը, այնուամենայնիվ, հնարավոր էր, որ դա որոշ լարվածություն ստեղծեր նիստերի դահլիճում: Դատախազի ճառը կընթերցվի օգոստոսի 5-ին:

Արշակ Սադոյանը դուրս կգա ընդհատակից, երբ ցորենը ընկույզի չա՞փ դառնա

«96-սեդտեմբեր եւ հաղթանարկյալներ» հասարակական խորհրդի հրավիրած հերթական կլոր սեղանը, որ տեղի ունեցավ երեկ Սախարով հիմնադրամում, վերաբերում էր «Ազ դատգամավորների նկատմամբ կալանքը որդես խափանման միջոց կիրառելու» օրինականությանը: Քննարկմանը մասնակցում էին Ռուբեն Թորոսյանը եւ փաստաբան Տիգրան Ջանոյանը վերոհիշյալ կազմակերդությունից, Կիմ Բալայանը եւ Շավարշ Քոչարյանը «Գխ դատգամավորական ակումբից», Ավետիք Իշխանյանը մարդու իրավունքների դաշտդանության Հելսինկյան կոմիտեի Հայաստանի մասնաճյուղից, Սամվել Դիլբանդյանը ԵԴՀ իրական դատավարության ամբիոնից, փաստաբան Ժորա Խաչատրյանը, ներկայացուցիչներ ԱՄՆ եւ Ֆրանսիայի դեսդանություններից: Հրավիրված մյուս «սուբյեկտները»՝ Ազ, Գերագույն դատարան, Սահմանադրական դատարան, դատախազություն, «Դատավորների միություն» ՀԿ, համերաշխ կերդով բացակայում էին, ինչպես նախորդ քննարկմանը: Մինչդեռ հատկապես նրանց ներկայությամբ կլոր սեղանը համախոհների մտքերի փոխանակությունից կվերածեր իրական երկխոսության:

Հասարակական խորհրդի քարտուղար Ռուբեն Թորոսյանը, բացելով կլոր սեղանը, նշեց, որ այսօրինակ քննարկումները կշարունակվեն օգտագործվել խորհրդի հայտարարությունների համար, քանի դեռ «Ազգային վերանվանված հեռուստատեսությունը» մնում է անմատչելի: Օրվա բանախոսը Տիգրան Ջանոյանն էր, որը ներկաների ուշադրությունը հրավիրեց Ազ սեդտեմբերի 26-ի հայտնի զգայացունց նիստում ՀՀ Գերագույն դատախազ Արտավազդ Գեւորգյանի ներկայացրած միջնորդությունների եւ դրանց համաձայնությունների իրավական (ավելի շատ իրավազանց) կողմի վրա: Դատախազը միջնորդել է եւ ստացել համաձայնություն Ազ դատգամավորներին քրեական դատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մինչդեռ նրանք կալանվել են՝ ի հեռուկս ՀՀ Սահմանադրության դատգամավորի անձեռնմխելիությանը վերաբերող 66-րդ հոդվածի, ուր ասվում է, որ Ազ դատգամավորները չեն կարող կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական դատասխանատվության ենթարկվել առանց Ազ համաձայնության: Ակնհայտ է, որ կալանքը եւ քրեական դատասխանատվությունը տարբեր հնստիտուտներ են (այլապես չէին առանձնացվի սահմանադրական նորմում), մինչ դատախազն իր հարցազրույցներից մեկում ասել էր, թե դրանք միեւնույն բանն են, թեեւ չէր կարող չհասկանալ տարբերությունը: Կալանքի սանկցիան սահմանադրության կողմից խախտում էր, եւ չնայած դրան, ոչ միայն շարունակում է ուժի մեջ մնալ Արշակ Սադոյանի դեպքում, այլեւ վերջինս դեռեւս հետախուզման մեջ է:

Ոչ մի երաշխիք չկա, որ Ազ դատգամավորը կխուսափի իր անձի նկատմամբ բռնարարքներից (վկա՝ դատավարությունների սեդտեմբերյան շարքը), ասաց դրն Ջանոյանը՝ նշելով, որ մի շարք դաշտոնատար անձինք միանգամ ընդունում են թույլատրված խախտումը՝ համաձայնելով, որ դատախազի միջնորդության բավարարումը չէր կարող հիմք ծառայել դատգամավորների կալանքի համար: Կլոր սեղանի մասնակիցներ՝ հարցերում եւ բանախոսի դատասխաններում արծարծվեց սեդտեմբերի 26-ի նիստում Ազ դատգամավորների նկատմամբ անդատիժ գործադրված բռնության փաստը, ինչը, դրն Թորոսյանի կարծիքով, լավագույնս գնահատվել է Արտավազդ Գեւորգյանի մեկ այլ հարցազրույցում. «Իմ միջամտությունը կարող էր անկանխատեսելի հետեւանքներ ունենալ, քանի որ ներկա էր ամբողջ դատգամավորական կորդուսը, Ազ նախագահը եւ փոխնախագահը»:

Կլոր սեղանի մասնակիցներն ընդունեցին հայտարարություն, որը հիմք կդառնա «96-սեդտեմբեր եւ հաղթանարկյալներ» հասարակական խորհրդի հայտարարության համար: Վերջինս կուղարկվի բոլոր միջազգային-իրավադահպան կազմակերդություններին, դեսդանատներին, կիրադարակվի մամուլում: Հայտարարության մեջ ասվում է, «1996 թ. հայտնի սեդտեմբերյան իրադարձություններից հետո կալանքի վերցված մի խումբ Ազ դատգամավորների նկատմամբ թույլ են տրվել սահմանադրական դահանջի կողմից խախտումներ, որով ոտնահարվել է դատգամավորների անձեռնմխելիության սկզբունքը, խաթարվել օրինականությունը: Դատադարտելով նման դրսեւորումները, անհանդուրժելի ենք համարում դատգամավորներին առանց Ազ համաձայնության կալանավորելու եւ Արշակ Սադոյանի նկատմամբ մինչեւ օրս գործող կալանավորման սանկցիայի առկայությունը եւ օրինականությունը համառորեն չվերականգնելու փաստը»:

Կարծում ենք, Արշակ Սադոյանի (եւ Ալբերտ Բաղդասարյանի) «ընդհատակյա» կենսակերդը չափազանց երկարեց, եւ ժամանակն է, որ «սեդտեմբերի 25-ի հերոսներ-արդարադատություն» խաղերի հարաբերական «ոչ-ոմի» արդյունքը տարածվի նաեւ նրանց վրա՝ հանրադետության գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի զգայուն «մրցավարությամբ», որը, ինչպես ասվեց, Սադոյանի կալանքի միջոցը փոխելու վերաբերյալ միջնորդություններին արձագանքել է «Թող գա, կտեսնենք» անորոշ տարբերակով:

ԼԵՎՈՆ ՊԱՐԱՍՅԱՆ

Արդարադատության նախարարության կոլեգիայի այսօրվա ընդլայնված նիստում դեսական գրանցում են ստացել «Հումանիզմի դրոբլեմների ակադեմիա», «Հանրային ատոյթության հայկական միություն», «Մարզային բուհերի ռեկտորների միություն», «Մարդը եւ զարգացումը», «ԱԱ-Քոնոս», կենդանիներ սիրողների «Արազիլ» ակումբ, «Ավանդական դեն-տն շտական կառատ-դո Ֆեդերացիա» հասարակական կազմակերդություններ, «Տնխնոդրոլիս» եւ «Գնոգիս» ամսագրեր, «Լեզի», «Հասկ», «Ավտոռեյտ» թերթեր, «Սմբաս» եւ «Սդիտակ» հեռուստախմբագրություններ, ինչպես նաեւ ռազման ջուր օգտագործողների Քարգրաշենի, Երզնկայի եւ Մուշի դաշտդական բնկերությունները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍՍՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh հանդերձյալին շարադրը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» դարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱՅԻԿ

Սկիզբը էջ 1

Արեւմտյան մամուլի ներկայացուցիչները. նույնիսկ այնպիսի բերբեր. որոնք անկողմնակալ լրատվություն տարածողի համբավ են ձեռք բերել. աղավաղում են իրավական եւ դասական փաստերը. անուղղակիորեն արդարացնելով թուրքական ագրեսիան: Ամեն անգամ. երբ կիպրական հարցն է շոշափվում. նրանք համարյա միշտ կրկնում են. որ Կիպրոսը փորձում էր իրագործել միանգամայն ավելի երկարացնելու:

գ) Եթե Հայաստանը թույլատրի. որ Նախիջեւանը միանա (վարչական եւ տարածային առումով) Ադրբեջանին. առա դրանով ընդմիշտ վերջ տված կլինի Նախիջեւանի ինքնուրույն ոչ-ռազմական Հայաստանի տարածքում է վերահսկելու հայկական հողեր ողողելու Թուրքիայի ախորժակը: Իհարկե. այդ ներկայացուցչությունը բավարար չէ: Ամերիկան կարեւոր դեր ունի այստեղ: Նա պետք է Թուրքիային հետ կանգնեցնի Հայաստանը մի անգամ եւս անդամահատելու ծրագրերից. նման սպառնալիքներին լրջորեն մոտենա եւ խափանի Էջեւիթի ծրագրերը. քանի դեռ դրանք չեն դարձել պետական քաղաքականություն եւ միջազգային հարց:

Դեսրոյք. ԱՄՆ

Բյուլենթ Էջեւիթն առաջարկում է էլ ավելի փոքրացնել Հայաստանի տարածքը

կողմանի «Էնոսիս» (միացում) Հունաստանի. հետ եւ Թուրքիան ստիպված էր դիմելու այդ քայլին: Բայց. անշուշտ. ճշմարտությունն այլ է: Հունաստանը կառավարող գնդապետներն այդ ժամանակ հեղաշրջում «բեմադրեցին» եւ արքեպիսկոպոս Մակարիոսին ղաշտնազրկելով նրա փոխարեն Սամսոն անունով մի խրտվիլակի դրեցին իշխանության գլուխ՝ առիթ տալով թուրքերին գործի անցնելու: Մի քանի օր անց. երբ ամեն ինչ ավարտված էր. նրանք դարձյալ Մակարիոսին նախագահ նշանակեցին: Գաղտնիք չէ. թե ով էր ղեկավարում հույն գնդապետներին այդ ժամանակ: Ֆինանսավորված ամերիկյան դոլարներով. Էջեւիթը. որն այդ ընթացքում Թուրքիայի վարչապետն էր. առաջնորդեց թուրքական զավթիչ բանակը. որն ամբողջությամբ գրավեց Կիպրոսի հյուսիսային մասը:

Բյուլենթ Էջեւիթը գոհ է: Նույնիսկ հոլարս է. որ արեւելյան Միջերկրականի տարածքում իր ստեղծած ընջուկը մինչեւ օրս (23 տարի անց) չի բանդվել համաշխարհային մարմինների կամ գերիշխան ղեսությունների կողմից: Եվ նա նոր ընջուկներ է փորձում ստեղծել այս անգամ Հայաստանում:

«Վերջերս թուրքական հեռուստատեսությամբ հեռարձակված հարցազրույցում այլ թեմաների շարքում նա անդրադարձավ նաեւ թուրք-ադրբեջանական հարաբերություններին: Նա մասնավորապես նշեց. որ եթե Նախիջեւանը Ադրբեջանին միացվեր. Թուրքիան կկարողանար բափանցել Ադրբեջան. Կասպից ծով եւ այնուհետեւ նաեւ... Կենտրոնական Ասիա: Պարոն Էջեւիթը վաղուց այն մտքին է. որ Նախիջեւանը կարելի է միացնել Ադրբեջանին բոնակցելով Հայաստանի Զանգեզուրի շրջանը: Նա նշում է. որ Հայաստանը կարող է փոխանակել Զանգեզուրը ցանկացած տարածքի հետ: Սա այն նույն թուրքական տրամաբանությունն է. որով ժամանակին Իսմեթ Ինոնյուն 1923 թվականին Լոզանի դաշնագրի թուրք ներկայացուցիչն էր շարժվում: Երբ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ լորդ Քերզոնը նրան հարցնում է. թե որտեղ պետք է տեղավորել տեղահանված 100 հազարավոր հայերին. Ինոնյուն պատասխանում է. «Շատ ընդարձակ եւ անմարդաբնակ տարածքներ կան Կանադայում ու Հարավային Ամերիկայում»:

Էջեւիթն իսկական հաջորդը լինելով Ինոնյուի. այնքան դրել է հայկական հողերի վրա եւ ծրագրում է 21-րդ դարի շեմին հայերի նոր տեղահանություններ կազմակերպել: Թուրքական այս ցանկություններն ու ծրագրերը. անշուշտ. նոր չեն: Տեսությունն էլ նոր չէ: Հիշենք. որ նման փոխանակումների մասին առաջարկել է նաեւ Պոլ Գոբլը: Նույնիսկ պետքարտուղարի օգնական Սթրոբ Թալբոթն է նշել: Նման հողատարածությունների փոխանակումն ինքնաբերաբար նշանակում է նշանակում Հայաստանի համար հետեւյալ պատճառներով.

ա) Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից կիրառվող շրջափակումը ստիպել է Հայաստանին տնտեսական հարաբերություններ մշակել Իրանի հետ. որը միջազգային առումով եւ հատկապես ԱՄՆ-ի համար «մերժված» պետություն է: Բայց Իրանը մնում է Հայաստանի տնտեսության հենարան գլխավոր կենտրոնակ ուժը եւ մենք չենք կարող կտրված լինել նրանից. ամբողջապես բողնվելով Թուրքիայի կամ Ադրբեջանի գթության ներքո:

բ) Ռազմավարական առումով Հայաստանն առանց այն էլ շատ երկար սահմանագիծ ունի իր դարավոր թշնամիների (Թուրքիա եւ Ադրբեջան) հետ եւ բոլորովին կարիք չկա այն ավելի երկարացնելու:

գ) Եթե Հայաստանը թույլատրի. որ Նախիջեւանը միանա (վարչական եւ տարածային առումով) Ադրբեջանին. առա դրանով ընդմիշտ վերջ տված կլինի Նախիջեւանի ինքնուրույն ռազմական դերակատարությանը: Նախիջեւանը ղաշտական Հայաստանի տարածք է եղել. որը հայերով բնակեցված է եղել խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին: Նախիջեւանի հայաբափումը Հեյդար Ալիեւի գործն էր. որն այդ ժամանակ ՊԱԿ-ի գնդապետ էր. իսկ հետո դարձավ քաղբյուրոյի անդամ:

Էջեւիթի պահանջներին զուգահեռ Հայաստանն իր կողմից պետք է բարձրացնի Նախիջեւանը իր օրինավոր տերերին վերադարձնելու հարցը: Ի դժգոհություն Պենտագոնի ռազմավարների Ռուսաստանի բանակը Հայաստանի տարածքում է վերահսկելու հայկական հողեր ողողելու Թուրքիայի ախորժակը: Իհարկե. այդ ներկայացուցչությունը բավարար չէ: Ամերիկան կարեւոր դեր ունի այստեղ: Նա պետք է Թուրքիային հետ կանգնեցնի Հայաստանը մի անգամ եւս անդամահատելու ծրագրերից. նման սպառնալիքներին լրջորեն մոտենա եւ խափանի Էջեւիթի ծրագրերը. քանի դեռ դրանք չեն դարձել պետական քաղաքականություն եւ միջազգային հարց:

Դեսրոյք. ԱՄՆ

Չգիտենք ինչ է «Հայ դասը», սակայն պատրաստ ենք նրա համար պայքարել

ԳԱԱԼ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ եւ ԵՊՀ-ի ազգագրության ամբիոնը Հայաստանում Համաշխարհային բանկի պատվերով վերջին 3-4 տարիներին հանրապետության տնտեսական. քաղաքական կյանքի փոփոխություններին ուղղված որոշակի հետազոտություններ են կատարում: Հետազոտությունների արդյունքները սիրով մեզ տրամադրեց ԵՊՀ-ի ազգագրության ամբիոնի վարիչ. պրոֆեսոր Հրանուշ Խառատյանը: Ներկայացնելով նաեւ հետազոտությունները ընդգրկող ժամանակաշրջանը՝ սկզբում ուսումնասիրվել են մինչեւ 94 թ.. իսկ 95-96 թթ.-ին դրանից հետո կատարված երեւույթները: Տիկին Խառատյանի ասելով. քանի որ հնարավորություն ունեին նաեւ դաշտային աշխատանք կատարելու ազգագրագետները համատեղեցին նաեւ իրենց հետաքրքրող հարցադրումները:

Փորձ է արվել պարզելու տնտեսա՞կան վերափոխություններն են մղում հասարակական փոփոխությունների. թե՞ նախատեսված էին հասարակական երեւույթներն այն ձեւով. ինչ ձեւով դրանք ներկա կյանքում կատարվում են: Դիցուք հասարակական նոր շերտերը: Հարցադրումները հետեւյալ պատկերն են ներկայացրել. Հայաստանում տնտեսական կյանքը գտնվում է ոչ թե իրավական որոշակի հարաբերությունների պրոցեսում եւ կարգավորվում է ոչ թե պետության տնտեսական կյանքի ռազմավարությամբ. այլ որոշակի անձանց. կլանների. խմբերի. ընտանիքների ձեռքին եւ թելադրված է նրանց կամքով: Հասարակական կյանքը շատ զգոն է արձագանքում այդ երեւույթներին եւ դրա ուղղակի արտացոլումն է: Հայաստանում հասարակական կյանքը հենց հիմա կայացած իրողություն է. որ երկու հսկայական բանակների է բաժանում: Դրանցից մեկում փոքրաթիվ ընտանիքների խումբն է. որոնք տնօրինում են տնտեսական եւ նյութական բարիքները. նրանք նաեւ հոգեւոր կյանքի թելադրողներն են: Տոկոսային հարաբերությամբ պատկերն այսպիսին է. 10 տոկոս ունեւորություն. որը շատավոր նման պրոցես է 2-3 տոկոս բարձրագույն սոցիալական էլիտայի շուրջը եւ մոտավորապես 90 տոկոս. որը կամազուրկ է եւ գտնվում է այդ թելադրված վարքագծի ոլորտում: Սոցիալական էլիտայի վարքագիծը ընդօրինակելի է դառնում սոցիալական մյուս շերտերի համար:

Հաջորդ հետազոտությունը նոյատակ ուներ պարզելու տնտեսական բարեփոխումների ծրագիրն ինչպե՞ս է ընկալվում բնակչության կողմից. որքանո՞վ է ժողովուրդը նախապատրաստված այդ վերափոխումներին եւ ինչպե՞ս կարելի է դրանք իրականացնել: Հետազոտությունները ցույց են տվել. որ ժողովուրդն ամենաբացասական ընկալումն ունի վերափոխությունների նկատմամբ: Նախ պատրաստված չէ եւ չգիտի ինչ է ընկած վերափոխման հիմքում եւ երկրորդ. արդեն իսկ կատարված վերափոխումների նկատմամբ բացարձակապես բացասական վերաբերմունք ունեին: «Եվ. այնուամենայնիվ. իշխանությունն ընդունեց այն ծրագիրը. որն առաջադրել էր Համաշխարհային բանկը». զարմանքով նշեց պրոֆեսորը: Այնուհետեւ շարադրեց հետազոտության արդյունքների հիման վրա ձեւավորված իր տեսակետը. ասելով. թե ակնհայտ երեւում է. որ Հայաստանը ոչ պատրաստ է. ոչ էլ իմաստ կա առողջապահական բժշկության անցնելու: Այս բժշկական համակարգը Հայաստանի բնակչության 5 տոկոսի համար է եւ կարելի էր առանց ռեֆորմի անել: Իսկ բնակչության 95 տոկոսը. որ ամենօրյա առնչություն եւ կարիք ունի. ըստ էության. արդեն դուրս է մղված կյանքից: Շատ արագ կծաղկի մասնավոր. բարձր բժշկությունը. հիվանդներին տանը կընդունեն այն չափով. ինչքան մարդը վճարունակ է: Սա հիմա Հայաստանում կարող ենք անվանել՝ այլընտրանքային բժշկության ծաղկման շրջան:

Նույնը վերաբերում է նաեւ Համաշխարհային բանկի կողմից ուսուցման վճարովի համակարգը Հայաստանում մուտք անելու փորձին: Տիկին Խառատյանն այն որակեց անգրագիտության տանող համակարգ. որը պարզորոշ ցույց են տալիս ուսումնասիրությունները: «Դասելով ուսանողների մակարդակից այս գործընթացն արդեն տալիս է իր պտուղները: Ուսանողների մեջ շատ արագ մարում են հոգեւոր մղումները: Նաեւ այն պատճառով. որ մեծանում է անգրագիտությունը ընդհանուր ճանաչողության մակարդակով»:



Զուտ ազգագրական հետազոտություններից առանձնացրինք հետեւյալը. ի՞նչ ասել է «Հայ դաս» եւ որո՞նք են դրա դրսեւորումները: Հարցումն անցկացվել է ամենատարբեր մասնագիտության. սոցիալական պատկանելության. սեռի եւ տարիքի մարդկանց միջեւ եւ տիկին Խառատյանի ասելով. արդյունքն անակնկալ էր: «Տեսականորեն կարելի էր ենթադրել. բոլորը չէ. որ լավատեղյակ կլինեն. սակայն. որ բնակչության գրեթե 95 տոկոսը չգիտի ինչ ասել է «Հայ դաս» անստգասելի էր: Հայաստանյան հողերը պետք է միանան Հայաստանին սա է «Հայ դաս» կոչվող երեւույթի ողջ իմացությունը: Սակայն «Հայ դաս» մոգական բառերն իրենք ունեին հուզական նշանակություն: Այն մարդիկ. ովքեր չգիտեն դրա իմաստն ու տարողությունը պատրաստ են Հայ դասի համար պայքարել: Բայց ո՞րն է այդ դասը. որի համար պետք է պայքարեն զրոյական է պատկերացումը:

Նույնքան «ցավալի» եզրակացության են հանգել՝ որչափո՞վ գիտենք մեր հարեւան ժողովուրդներին. նրանց պատմությունն ու մշակույթը. հարցման արդյունքում: Եզրակացությունն այն էր. որ մենք բավականին հավակնոտ ենք եւ շատ վատ գիտենք անգամ մեր հարեւաններին: Կովկասյան ժողովուրդներից շատ քիչ բացառությամբ գիտենք նրանց անունները. որոնք այս կամ այն պատճառով հիմա քաղաքական պայքարի մեջ են՝ աբխազներ. չեչեններ. ինգուշներ եւ այլն: Ովքեր մի քանի անուն ավելի են թվում պարզապես եղել են այդ միջավայրում. ոչ թե այստեղ են գիտելիքներ ձեռք բերել: Նույնիսկ այդ իմացությունը շատ թեական է: Պարզվեց. որ վրացիների դավանանքը մեր մեջ եղածներից շատերը չգիտեն: Համեմատաբար եվրոպացիներին են ճանաչում անգլիացի. ֆրանսիացի. գերմանացի. իսպանացի. իտալացի: Ասիական ժողովուրդներից գիտեն պարսիկներին. բայց ոչ թե իբրեւ ժողովուրդ իր պատմությամբ ու կոլտուրայով եւ այլն: «Ուրեմն. մեր ճանաչողությունը կամ արդյունքն է մեր միէթնիկության կամ մեր միէթնիկությունը արդյունքն է մեր չճանաչողության». սա էր ազգագրագետի եզրակացությունը կատարված ուսումնասիրություններից:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Կհամագործակցեն Երեւանը եւ Կիեւը

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Օգոստոսի 1-ին Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը հանդիպեց Հայաստանում Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոյի հետ: Ըստ քաղաքապետարանի լրատվական բաժնի. շարունակելով երկու երկրների նախագահների ընտրած համագործակցության շարժուն տարբերակը՝ համագործակցություն Հայաստանի եւ Ուկրաինայի քաղաքների. համայնքների միջեւ. Երեւանի քաղաքապետը եւ Ուկրաինայի դեսպանը որոշեցին գործնականում իրականացնել նախկինում կնքված. բայց առայժմ չգործող Կիեւ-Երեւան համագործակցության համաձայնագրի դրույթները: Զրույցի ընթացքում քննարկվել է նաեւ Երեւանում Ուկրաինայի դեսպանատուն ունենալու հարցը: Նախնական համաձայնություն է ձեռք բերվել նոյեմբեր ամսին Կիեւի քաղաքապետին Երեւան հրավիրելու մասին:

Երկու խոշոր վթար ջրատար մայրուղիներում

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հուլիսի 31-ի լույս օգոստոսի 1-ի գիշերը Գառնի-Երեւան մայրուղու այն հատվածում. որ անցնում է Երեւանի Նալբանդյան եւ Չարենցի փողոցների խաչմերուկով. ջրատար խողովակից պոկվել է փականը. որի հետեւանքով ջրի հոսքը լցվել է փողոցները քաղաքի տվյալ տեղամասում: Վթարի վերացման համար 20 կմ երկարությամբ ջրատարը դատարկվել է: Դադարեցվել է գրեթե բոլոր բնակելի շենքերի եւ ձեռնարկությունների ջրամատակարարումը. որոնք տեղաբաշխված են քաղաքի կենտրոնում: Երեւանի քաղաքապետարանի «Ջրմուղ-կոյուղու տնտեսություն» պետական ձեռնարկության գլխավոր ինժեների խոսքերով. վթարը կհաջողվի վերացնել երեքշաբաթ երեկո. իսկ ջրամատակարարումը կվերականգնվի ոչ մեծ ծավալով եւ սահմանված գրաֆիկից դուրս ուշացումով:

Նույն օրը մոտ 8:00-ին Մասիսի պոմպակայանից ոչ հեռու Մասիս-Երեւան մայրուղու վնասված խողովակաբաշից ջուրը ժայթքել է՝ լցվելով մերձակա հողամասերը: Քանի որ խողովակաբաշը գտնվում է մայրուղու ջրաբաշխիչ տեղամասի ամենացածր մակարդակում. ջրատարը շատ դատարկվում է մոտավորապես 20 կմ երկարությամբ. որ ձգվում է պոմպակայանից դեպի ամբարները. որ ջուր են մատակարարում Երեւանին: Ջրատարը կհաջողվի դատարկել 1.5 ժամում: Վթարի պատճառները պարզվում են:

Սինգապուրում լույս է տեսել Հայաստանը ներկայացնող գիրք

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Սինգապուրի «Թայմս բուքս ինթերնեյշնլ» հրատարակչությունը՝ «Աբխազիի մշակույթները» մատենաշարի վերջերս անգլերեն լույս տեսած հերթական գրքով ներկայացրել է Հայաստան աշխարհը. հայ ժողովրդի դարավոր պատմությունն ու մշակույթը:

Գրքում առանձին խորագրերով՝ աշխարհագրություն. պատմություն. իշխանություններ. տնտեսություն. եկեղեցի. լեզու. մշակույթ եւ այլն. հնարավորին չափ հագեցած ներկայացվում են հազարամյակների պատմություն ունեցող երկրի աշխարհագրական առանձնահատկությունները. ուրարտուից մինչեւ մեր օրերի պատմությունը (ներառյալ արցախյան պայքարը). քաղաքական կառույցներն ու գործիչները. ինչպես նաեւ միջազգային հարաբերություններն ու ազգային յուրահատկությունները:

Տպավորիչ են բարձրորակ. գունավոր լուսանկարները. որոնք հրատարակչությանն է տրամադրել Հայաստանի Արմենթրես պետական լրատվական գործակալությունը. ինչպես նաեւ արտասահմանյան տարբեր կազմակերպություններ ու անհատ լուսանկարիչներ:

ԱԶԳ

աշխարհաքաղաքական

Այս մանրամասն աշխատությունը պարունակում է Եվրոպայի քաղաքական մտքի պատմությունը՝ պետական եւ հասարակական զուգահեռ հարթություններ վրա: Ընթերցողը պիտի տեսնի, թե ինչպես գրեթե երեք հազար տարի շարունակ ծլարձակել ու տակավ առ տակավ հասունացել է Եվրոպայի միասնության գաղափարը, հասնելու համար «միասնություն՝ բազմազանության մեջ» բանաձեւումին: Պիտի վկա լինի նաեւ պատմական Եվրոպայի քաղաքականության այլակերպություններին, որոնք այնքան ճակատագրական եղան եւ շարունակում են լինել շատ ժողովուրդների համար:

Միասնության խնդիրը ծագել է, քանի որ բազմաթիվ դարերի ընթացքում Եվրոպական տերությունները գտնվել են անընդհատ առճակատման մեջ, պատերազմել միմյանց դեմ, ոչնչացրել մարդկանց, նյութական եւ հոգեւոր անհաշիվ հարստություններ: Եվ միշտ Եվրոպայում խաղաղություն հաստատելը եղել է գերխնդիր, իսկ դրան հասնելու դրդապատճառը փնտրվել է նրա սահմաններից անդին: Այսինքն՝ ձգտել են գտնել մի գործոն, ձեռքը, եւ նրանք, ովքեր կիրաժարվեն այդ լծի տակ ապրել, մեծ տրմիղներով կգաղթեն Նոր աշխարհ»: Բայց նույնիսկ Ամերիկա գաղթելը նրանց չի փրկի, որովհետեւ թուրքը իր թաթը կդնի նաեւ այդ Նոր աշխարհի վրա: «Բայց այնտեղ էլ,- շարունակում է Վիվենը.- նորանք ապաստան չեն գտնի ընչաքաղցության եւ հավակնությունների բոքերի արշավանքից: Ի՞նչ ամրություն կարող են դնել թուրքերի դեմ, եթե նրանք նվաճեն Գերմանիան» (էջ 82):

Ֆրանսիացի հուգենոտ Լա Նուն, նույն մտահոգություններով առաջնորդված, գրում էր. «Եթե քրիստոնյա թագավորները միավորվեն, չորս տարում կարող են թուրքերին քշել Եվրոպայից» (էջ 83): Դրանից մի հարյուր տարի անց վեյցարացի առեւտրական Գուդեն առաջարկում է Եվրոպային միավորվել, «որպեսզի իրար մեջ մասնատեն Օսմանյան կայսրությունը»: Իսկ կարդինալ Ալբերոնին նախագիծ է մշակում «թուրական կայսրությունը քրիստոնեական սկզբունքներին ենթարկելու եւ նրա զավթած իրար մեջ բաժանելու խնդրի վերաբերյալ» (էջ 110):

Պետրոս Մեծի քանքերով եւ նրանից հետո Ռուսաստանը սկսեց աննախադեպ ամրանալ: Այդ բանը անմիջապես նկատեցին Եվրոպայում: Ֆրանսիական հեղափոխությամբ ստեղծված Հանրապետության կոնսուլներից մեկը՝ քաղաքացի Դելոնեն, 1794 թվականին գրեց. «Երբ մտածում ես Ռուսաստանի հզորության զարմանալի մեծացման մասին, որ տեղի ունեցավ մեր դարի ընթացքում, եւ այն մասին, թե ինչի կարող է հասնել, եւ նրա հավակնությունների մասին, արդա դարձ է դառնում, որ պետք է սանձվի Եվրոպայի մի տերությունը, որը կարող է մեծ հեղափոխություններ սկսել Մայրցամաքում» (էջ 112):

Մարդու իրավունքները հանդիսավորապես հռչակած երկրի ղեկավարության այս անդամը հանուն իր տերության շահերի պատրաստ էր բարեկամանալ նույնիսկ այդ օրերին Եվրոպայի համար սպառնալիք արտաբնող մարդակեր բռնակալությանը: Նա գրում էր. «Թող զգուշանան թուրքերի դեմ խաչակրաց արշավանք կազմակերպելու առաջարկից, քանի որ, ընդհակառակն, պետք է նրանց օգնել... ընդդեմ ռուսների: Քանի գոյություն չունի Եվրոպական ամուր կազմակերպություն, պետք է վախենալ ռուսական ազդեցությունից» (էջ 111):

Պատահա՞ն էր, արդյոք, որ Նապոլեոնը քանաց իր սվիններին ծայրին «ազատություն արտահանել» ոչ միայն Եվրոպայի մնացած ժողովուրդներին, այլեւ Ռուսաստանին՝ քաղաքաքաղաքակիրթ լինելու համար նրա գրությունը: Պատահա՞ն էր, արդյոք, որ հետայնու ռուս-թուրական բոլոր առճակատումների ժամանակ Արեւմուտքը կանգնել է թուրքերի կողմին: Այդ ամենը Եվրոպական (եւ ամբողջ արեւմտյան) քաղաքական մտքի մայրուղին դարձավ:

Պատմությունն այսօր հաճախ այնպես է ներկայացվում, թե Արեւմուտքի առճակատումը Ռուսաստանի հետ ծագել է միայն իբրեւ արդյունք Հոկտեմբերյան հեղափոխության: Իրոք, հեղափոխությունը փոխեց Ռուսաստանի վերարկուն եւ XX դարասկզբին հայությանն եզրին կանգնած կայսրությունը վերածեց աշխարհիս ամենազորավոր տերություններից մեկի: Այս հանգամանքը, բնականաբար, ավելի սրեցնեց Արեւմուտքի տագնաքը:

Հետաքրքրական է, որ նույնիսկ քաղաքական կլիմաները մեր օրերում փոխառնվում էին անցյալից: Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Չերչիլը շրջանառության մեջ դրեց «երկաթե վարագույր» հասկացությունը: Թերթասեղեր Աբբա դը Պրաշի «Զուգահեռ անգլիական եւ ռուսական պետությունների՝ Եվրոպայի առնչությամբ» ուսումնասիրությունը: Դեռեւս Չերչիլից հարյուր տարի առաջ նա գրում էր. «Վիսլայից այն կողմ իջնում է մի վարագույր, որը չափազանց խանգարում է տեսնել, թե ինչ է կատարվում ռուսական կայսրության մեջ» (էջ 261):

Նախագահ Ռեյգանը հրաժարակ հանեց «չարիքի կայսրություն» եզրը: Իսկ Քլինթոնը նախագահական ընտրությունների առթիվ իր ելույթում արտաքին քաղաքականության բնագավառում իր խոշորագույն ձեռքբերումը հայտարարեց ԽՍՀՄ-ի փլուզումը: Արտաքին ու ներքին համատեղ ուժերով վերացավ, այսօր արդեն չկա «չարիքի կայսրությունը», բայց ՆԱՏՕ-ի ռազմական մեխանիզմը համաբորեն մոտենում է Ռուսաստանին: Շուտով, երբ հարկ լինի, Բելոռուսիայի սահմանների երկայնքով, ՆԱՏՕ-ի նորոգ անդամ Լեհաստանի հողամասում կտնկվեն մահաբեր հրթիռները:

Հարավային թատերաբեմում տեղի է ունենում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի անընդհատ զինումը, առկա են նրա ոչ ադարդյուն ջանքերը նոր ավյուն տալու համաթուրականությանը, թուրքալեզու պետությունների մի «մշակութային» (առայժմ) միավորումով գրկելու Ռուսաստանի հարավային «փորը»:

Ինչո՞ւ: Չէ որ Ռուսաստանում էլ պետական քաղաքականության մակարդակով առաջնային-հիմնական են հռչակվել մարդու իրավունքները, ժողովրդավարական կարգը եւ ազատ շուկան:

Հարցի պատասխանները հստակ տրված են Եվրոպայի պատմության հոլովույթում: Իզուր չէր, որ դուքս դը Սյուլլին դեռեւս XVII դարի կեսերին իր ծրագրում Եվրոպայի համար արեւելքից պատնեշ էր նախատեսում «մոսկվացիների դեմ» հանձին Լեհաստանի, եւ գտնում էր, որ Ռուսաստանը չպետք է ընդունվի որպես քրիստոնեական համայնքի անդամ (էջ 93):

Հենց նույն տրամաբանությամբ էլ մեր ժամանակների Թուրքիան ազատորեն կատարում է իր ցանկացած խայթերը Արեւմուտքի տերությունների լռակյաց խրախուսանքի ուղեկցությամբ ու աջակցությամբ: Բնավ պատահական չէ, որ ամբողջ Արեւմուտքը սիավոր «զայրացած» ոտքի ելավ պատժելու համար մի ավազակի, որը փորձեց զավթողականության նոր փուլի առաջ»: Պատգամավորները, ոչ առանց հիմքի, տագնապում են, որ Թուրքիան Թրակիայի հարց է հարուցել Կիպրոսի օրինակով այնտեղ ներխուժելու համար:

Պատգամավորներից մեկը այցելել է Իմբրոս կղզի եւ ականատես եղել «ժամանակակից քաղաքակիրթ Թուրքիայի» նորօրյա արարքներին: «Մենք այնտեղ տեսանք քրիստոնյաների՝ փողոց նետված ոսկորներ, եկեղեցիների սուրբ սեղաններին կապված խոզեր, միզարաններ դարձած արբավայրեր եւ ուրիշ բաներ, որոնք սարսափելի տպավորություն են գործում... Մի՞թե այդ [illegible] շարակել, եանզի հիշողությունը կորցրած ժողովուրդը եւ ազգը դատապարտված են մահվան»:

Մի ուրիշ պատգամավոր՝ Սթիվենս-Անգելոս Պաղաբեմելիսը հայտարարում է. «Կիպրոսը գրավված է, պատմականորեն ապացուցված է, որ ամբողջ էգեյան ավազանը եւ Փոքր Ասիան բնակեցված են եղել հույներով, եւ նրանք բոլորը բնաջնջվել են: Թուրքերն այժմ ձգտում են հելլենականության փուլ առ փուլ բնաջնջմանը՝ սկսելով էգեյան կղզիներից»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ Թուրքիան մերժում է ճանաչել հայոց ցեղասպանությունը, պատգամավոր Պանայոտիս Սպուրիդիսը հայտարարում է. «Քանի որ աշխարհի բոլոր հզորները լռություն են պահպանում այն գործողությունների հանդեպ, որ այսօր էլ տակավին կատարում է Թուրքիան»: Այնուհետեւ նա դիտում է, թե Գերմանիան պատշաճորեն ընդունեց եւ ներողություն խնդրեց երկրորդ աշխարհամարտի ընթացքում հրեաների ոչնչացման համար, իսկ նույն պատերազմից հետո աշխարհիս մեծերի հովանավորյալ «Թուրքիան այսօր դամբարանով մեծարում է Թալեաթ փաշային»:

Միանգամայն տրամաբանական է Սպուրիդիսի վերլուծությունը: Իրոք, եթե Արեւմուտքը ընդուներ Թուրքիայի հանցագործությունները անցյալում, արդա սիրված պիտի լիներ նաեւ դատապարտել նրա կողմից ներկայումս կատարվող հանցագործությունները, որոնք ոնով, մեթոդներով, ձեռագրով ճիշտ նույնն են, պիտի արգելեր ու պատժեր հանցավորին:

Հույն պատգամավորների համար հստակ է, թե ինչպես է կազմավորվում հասարակական կարծիքը, որը շարունակ պարտադրում է Արեւմուտքի քաղաքականությունը: Հիշատակածս Վունացուը այդ առթիվ նկատում է «...Ունենք համալսարանների պրոֆեսորներ, հատկապես անգլիացիներ ու ամերիկացիներ,- բայց արձաթով վաճառվածներ եղել են ու կլինեն միշտ եւ բոլոր ազգերի մեջ,- որոնք կվիճարկեն այդ ողբերգական դեպքերը»:

Այս տեսակետից մի հետաքրքրական պարագա կազմվում է սերբերի հետ: Վերջին տարիներս Բալկանյան երկրներում զարգացող իրադարձությունների կապակցությամբ մի վիթխարի ար-

Եվրոպան պատմության հոլովույթում

Մտորումներ հայ մտքաղաքանը հարուցած մի գրքի առթիվ

Ներհուն մտավորական Ալ. Թոփչյանը խիստ ընտրահակալ մի գործ է կատարել: Ֆրանսերենից թարգմանելով. 1996 թվականին նա հրատարակել է պատմաբան-փիլիսոփա Դենի դը Ռուժմոնի «Եվրոպայի խաղաղություն դարերը» աշխատությունը: Հաղթահարել է թարգմանական կարգի խոշոր դժվարություններ: Այդ մասին թողնենք. սակայն. մասնագետներին: Իմ մտորումները վերաբերում են գրքի բուն բովանդակությանը: Այն մասին. թե ինչպես են արեւմտյան պետությունները Ռուսաստանի հզորացման դեմ որպես վահան 17-րդ դարի վերջերից սկսած պատշտպանել ու շարունակում են պատշտպանել թուրքերին. այլ փակելով նրանց բարբարոսությունների առաջ. այդ թվում նաեւ հայոց դեմ կատարված ցեղասպանությունը:

Հասարակական մտքի խոշորագույն ներկայացուցիչները՝ Դանթեից մինչեւ Հյուգո, մշակում էին հասարակական կարծիքը, այն ուղղում թուրական մարդասյաց քաղաքականության դեմ: Պետական գոչում էր. «Տիրոջ ծննդավայրը եւ գերեզմանը շների ոտքի կոխան է դարձել»: Շեքսպիրի հերոսների շուրթերին հաճախ են հնչում թուրքերի դեմ պայքարի մոտիվները: Հյուգոն արձանագրեց. «այստեղով անցել են թուրքերը»:

Միջեվրոպական պատերազմներից դառնացած երազմ Ռոտերդամցին XVI դարում գրում էր. «Բայց եթե պատերազմը, այդ մահաբեր հիվանդությունը անբաժան է մարդկությունից, որ անհնար է առանց նրա գոյություն ունենալ, ինչո՞ւ քրիստոնյաները այս պատուհասը չեն ուղղում թուրքերի դեմ... եթե չեն կարող փոխադարձ սիրով միավորվել, արդա գոնե ընդհանուր բշնամու դեմ միավորվեն» (79):

Բայց կատարվում է անսպասելին: Սեփական շահերը հետամտող Ֆրանսիան նույն XVII դարում դաշնակցում է թուրքերի հետ ընդդեմ միացյալ Եվրոպայի: Սա առաջին ծիծեռնակն էր, որը, սակայն, դեռեւս չէր բնութագրում Եվրոպայի հետագա ընթացքը հօգուտ թուրքերի հետ մերձեցման:

Արդեն հաջորդ դարում գիտնական Լայբնիցը մի ծրագիր է ներկայացնում Լուի XIV-ին, որի մեջ «առաջարկում է եւս մեկ անգամ գործել թուրքերի դեմ» (էջ 114): Հենց նույն դարաշրջանում Եվրոպայում հոլովվել է սկսում Ռուսաստանի անունը որպես էական քաղաքական գործոնի: Իսկ Լայբնիցը գտնում էր, որ Ռուսաստանի դերը պետք է լինի քրիստոնեական միություն ստեղծել Եվրոպայի եւ Չինաստանի միջեւ՝ հանուն քաղաքակրթության գերպգույն սինթեզի»: «Ցարը եւ Հաբեշստանի արքան քրիստոնյաներ են... թուրքին բշնամի են եւ սահմանակից» (էջ 116):

Դա մի շրջան էր, երբ Եվրոպայի քաղաքական միտքը Ռուսաստանը դիտարկում էր որպես թուրական ծավալապաշտությունը զսպող գործոն: Բայց շուտով ամեն ինչ փոխվում է: Ռուժմոնը ընդհանրացնում է, թե Եվրոպական քաղաքական միտքը մինչեւ XVIII դարի վերջերը ճգտում էր «Ռուսաստանի հզորությամբ թուրքերին զսպել, մինչեւ որ XVIII դարի վերջում քաղաքական ընթացքը շրջվեց. Ռուսաստանը հանկարծ դարձավ քաղաքական վտանգ, ընդդեմ որի լավ կլիներ միանալ եւ լեզու գտնել թուրքերի հետ» (էջ 259):

Հենց այդ մայրուղիով էլ ընթացավ հետագա պատմությունը եւ մինչեւ այսօր էլ շարունակում է իր հոլովույթը:

Սկսվեց մոտավորապես այսպես:

Պետրոս Մեծի քանքերով եւ նրանից հետո Ռուսաստանը սկսեց աննախադեպ ամրանալ: Այդ բանը անմիջապես նկատեցին Եվրոպայում: Ֆրանսիական հեղափոխությամբ ստեղծված Հանրապետության կոնսուլներից մեկը՝ քաղաքացի Դելոնեն, 1794 թվականին գրեց. «Երբ մտածում ես Ռուսաստանի հզորության զարմանալի մեծացման մասին, որ տեղի ունեցավ մեր դարի ընթացքում, եւ այն մասին, թե ինչի կարող է հասնել, եւ նրա հավակնությունների մասին, արդա դարձ է դառնում, որ պետք է սանձվի Եվրոպայի մի տերությունը, որը կարող է մեծ հեղափոխություններ սկսել Մայրցամաքում» (էջ 112):

Մարդու իրավունքները հանդիսավորապես հռչակած երկրի ղեկավարության այս անդամը հանուն իր տերության շահերի պատրաստ էր բարեկամանալ նույնիսկ այդ օրերին Եվրոպայի համար սպառնալիք արտաբնող մարդակեր բռնակալությանը: Նա գրում էր. «Թող զգուշանան թուրքերի դեմ խաչակրաց արշավանք կազմակերպելու առաջարկից, քանի որ, ընդհակառակն, պետք է նրանց օգնել... ընդդեմ ռուսների: Քանի գոյություն չունի Եվրոպական ամուր կազմակերպություն, պետք է վախենալ ռուսական ազդեցությունից» (էջ 111):

Պատահա՞ն էր, արդյոք, որ Նապոլեոնը քանաց իր սվիններին ծայրին «ազատություն արտահանել» ոչ միայն Եվրոպայի մնացած ժողովուրդներին, այլեւ Ռուսաստանին՝ քաղաքաքաղաքակիրթ լինելու համար նրա գրությունը: Պատահա՞ն էր, արդյոք, որ հետայնու ռուս-թուրական բոլոր առճակատումների ժամանակ Արեւմուտքը կանգնել է թուրքերի կողմին: Այդ ամենը Եվրոպական (եւ ամբողջ արեւմտյան) քաղաքական մտքի մայրուղին դարձավ:

Պատմությունն այսօր հաճախ այնպես է ներկայացվում, թե Արեւմուտքի առճակատումը Ռուսաստանի հետ ծագել է միայն իբրեւ արդյունք Հոկտեմբերյան հեղափոխության: Իրոք, հեղափոխությունը փոխեց Ռուսաստանի վերարկուն եւ XX դարասկզբին հայությանն եզրին կանգնած կայսրությունը վերածեց աշխարհիս ամենազորավոր տերություններից մեկի: Այս հանգամանքը, բնականաբար, ավելի սրեցնեց Արեւմուտքի տագնաքը:

Հետաքրքրական է, որ նույնիսկ քաղաքական կլիմաները մեր օրերում փոխառնվում էին անցյալից: Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո Չերչիլը շրջանառության մեջ դրեց «երկաթե վարագույր» հասկացությունը: Թերթասեղեր Աբբա դը Պրաշի «Զուգահեռ անգլիական եւ ռուսական պետությունների՝ Եվրոպայի առնչությամբ» ուսումնասիրությունը: Դեռեւս Չերչիլից հարյուր տարի առաջ նա գրում էր. «Վիսլայից այն կողմ իջնում է մի վարագույր, որը չափազանց խանգարում է տեսնել, թե ինչ է կատարվում ռուսական կայսրության մեջ» (էջ 261):

Նախագահ Ռեյգանը հրաժարակ հանեց «չարիքի կայսրություն» եզրը: Իսկ Քլինթոնը նախագահական ընտրությունների առթիվ իր ելույթում արտաքին քաղաքականության բնագավառում իր խոշորագույն ձեռքբերումը հայտարարեց ԽՍՀՄ-ի փլուզումը: Արտաքին ու ներքին համատեղ ուժերով վերացավ, այսօր արդեն չկա «չարիքի կայսրությունը», բայց ՆԱՏՕ-ի ռազմական մեխանիզմը համաբորեն մոտենում է Ռուսաստանին: Շուտով, երբ հարկ լինի, Բելոռուսիայի սահմանների երկայնքով, ՆԱՏՕ-ի նորոգ անդամ Լեհաստանի հողամասում կտնկվեն մահաբեր հրթիռները:

Հարավային թատերաբեմում տեղի է ունենում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի անընդհատ զինումը, առկա են նրա ոչ ադարդյուն ջանքերը նոր ավյուն տալու համաթուրականությանը, թուրքալեզու պետությունների մի «մշակութային» (առայժմ) միավորումով գրկելու Ռուսաստանի հարավային «փորը»:

Ինչո՞ւ: Չէ որ Ռուսաստանում էլ պետական քաղաքականության մակարդակով առաջնային-հիմնական են հռչակվել մարդու իրավունքները, ժողովրդավարական կարգը եւ ազատ շուկան:

Հարցի պատասխանները հստակ տրված են Եվրոպայի պատմության հոլովույթում: Իզուր չէր, որ դուքս դը Սյուլլին դեռեւս XVII դարի կեսերին իր ծրագրում Եվրոպայի համար արեւելքից պատնեշ էր նախատեսում «մոսկվացիների դեմ» հանձին Լեհաստանի, եւ գտնում էր, որ Ռուսաստանը չպետք է ընդունվի որպես քրիստոնեական համայնքի անդամ (էջ 93):

Հենց նույն տրամաբանությամբ էլ մեր ժամանակների Թուրքիան ազատորեն կատարում է իր ցանկացած խայթերը Արեւմուտքի տերությունների լռակյաց խրախուսանքի ուղեկցությամբ ու աջակցությամբ: Բնավ պատահական չէ, որ ամբողջ Արեւմուտքը սիավոր «զայրացած» ոտքի ելավ պատժելու համար մի ավազակի, որը փորձեց զավթողականության նոր փուլի առաջ»: Պատգամավորները, ոչ առանց հիմքի, տագնապում են, որ Թուրքիան Թրակիայի հարց է հարուցել Կիպրոսի օրինակով այնտեղ ներխուժելու համար:

Պատգամավորներից մեկը այցելել է Իմբրոս կղզի եւ ականատես եղել «ժամանակակից քաղաքակիրթ Թուրքիայի» նորօրյա արարքներին: «Մենք այնտեղ տեսանք քրիստոնյաների՝ փողոց նետված ոսկորներ, եկեղեցիների սուրբ սեղաններին կապված խոզեր, միզարաններ դարձած արբավայրեր եւ ուրիշ բաներ, որոնք սարսափելի տպավորություն են գործում... Մի՞թե այդ [illegible] շարակել, եանզի հիշողությունը կորցրած ժողովուրդը եւ ազգը դատապարտված են մահվան»:

Մի ուրիշ պատգամավոր՝ Սթիվենս-Անգելոս Պաղաբեմելիսը հայտարարում է. «Կիպրոսը գրավված է, պատմականորեն ապացուցված է, որ ամբողջ էգեյան ավազանը եւ Փոքր Ասիան բնակեցված են եղել հույներով, եւ նրանք բոլորը բնաջնջվել են: Թուրքերն այժմ ձգտում են հելլենականության փուլ առ փուլ բնաջնջմանը՝ սկսելով էգեյան կղզիներից»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ Թուրքիան մերժում է ճանաչել հայոց ցեղասպանությունը, պատգամավոր Պանայոտիս Սպուրիդիսը հայտարարում է. «Քանի որ աշխարհի բոլոր հզորները լռություն են պահպանում այն գործողությունների հանդեպ, որ այսօր էլ տակավին կատարում է Թուրքիան»: Այնուհետեւ նա դիտում է, թե Գերմանիան պատշաճորեն ընդունեց եւ ներողություն խնդրեց երկրորդ աշխարհամարտի ընթացքում հրեաների ոչնչացման համար, իսկ նույն պատերազմից հետո աշխարհիս մեծերի հովանավորյալ «Թուրքիան այսօր դամբարանով մեծարում է Թալեաթ փաշային»:

Միանգամայն տրամաբանական է Սպուրիդիսի վերլուծությունը: Իրոք, եթե Արեւմուտքը ընդուներ Թուրքիայի հանցագործությունները անցյալում, արդա սիրված պիտի լիներ նաեւ դատապարտել նրա կողմից ներկայումս կատարվող հանցագործությունները, որոնք ոնով, մեթոդներով, ձեռագրով ճիշտ նույնն են, պիտի արգելեր ու պատժեր հանցավորին:

Հույն պատգամավորների համար հստակ է, թե ինչպես է կազմավորվում հասարակական կարծիքը, որը շարունակ պարտադրում է Արեւմուտքի քաղաքականությունը: Հիշատակածս Վունացուը այդ առթիվ նկատում է «...Ունենք համալսարանների պրոֆեսորներ, հատկապես անգլիացիներ ու ամերիկացիներ,- բայց արձաթով վաճառվածներ եղել են ու կլինեն միշտ եւ բոլոր ազգերի մեջ,- որոնք կվիճարկեն այդ ողբերգական դեպքերը»:

Այս տեսակետից մի հետաքրքրական պարագա կազմվում է սերբերի հետ: Վերջին տարիներս Բալկանյան երկրներում զարգացող իրադարձությունների կապակցությամբ մի վիթխարի ար-

ՀԱՅ ՏՐՔԱՆ

Ադրբեջանը սնվում է պատրանքներով

Ադրբեջանական մամուլը. որ հատկապես վերջին օրերին առանձնահատուկ հետաքրքրությամբ եւ ոգեւորությամբ է հետեւում նոր նախագծումների զարգացմանը. այսօր դիմում է բոլոր միջոցներին առավել հարմար հասարակական կարծիք ձեւավորելու նպատակով: Նման գործելակերպը բնավ չի կարելի համարել անհիմն. առավել ես հուլիսի 22-ին եւ 26-ին համապատասխանաբար Վրաստանի եւ Ադրբեջանի նախագահների ԱՄՆ կատարած պաշտոնական այցերի համատեքստում: Հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորությունները. ինչպես նաեւ Հարավային Կովկասի երկու հանրապետությունների արեւմտյան դիրքորոշման ընդգծվածությունը. եւ այս առումով. Հայաստանին տարածաշրջանում վիճակն ապակայունացնող հիմնական գործոն համարելը հիմք է տվել երկրորդ տարին անընդմեջ «լավագույն ադրբեջանցի լրագրողի» կոչմանն արժանացած Նուրանիին մտածել. որ «ԱՄՆ-ում գործող հայկական լոբբին հայտնվել է դժվար վիճակում: ԱՄՆ-ում այսօր ոչ ոք չի հանդգնի պաշտպանել Իրանի եւ Լիբիայի շահերը. թեեւ դա կարծես թե արգելված չէ: Այսօր կան բոլոր հիմքերը Հայաստանին միջազգային ահաբեկչության պաշտպանող երկրների շարքը դասելու: Այնուամենայնիվ. թե որքանով կհաջողվի օգտագործել ստեղծված նախադրյալները. որոշ չափով կախված է նաեւ Ադրբեջանից» («Զերկալո». 26 հուլիսի. «Պատրա՞ստ է ԱՄՆ-ը ռիսկի դիմելու Անդրկովկասում»): Այս առումով որոշակիորեն «կարդացվում է» Հեյդար Ալիեւի վարչակազմի պաշտպանության նախարար Կասպար Ուայնբերգերին: Անաչառության սկզբունքներ քարոզող հիշյալ անձինք իրականում շահագրգիռ կողմ են. քանզի կատյան նավթի առաջին շտրվաները կողմնորոշված են նաեւ իրենց գրպանների ուղղությամբ: Այս իսկ պայմանավորվածությամբ բնական կարելի է համարել. որ նշված մարդիկ միշտ չէ. որ իրենց խոսքում մնում էին դիվանագետ: Մասնավորապես. Կասպար Ուայնբերգերի զեկույցը ուղղված էր ոչ միայն հատկացումների որոշման 907 հոդվածի խոչընդոտվերացմանը. այլեւ Ադրբեջանին համարում էր Ռուսաստանին դիմակայող տարածաշրջանային միակ երկիր: Հատուկ ընդգծելով այն հանգամանքը. որ այսօր ՌԴ զորքերը հենակետեր ունեն ինչպես Վրաստանում. այդպես էլ Հայաստանում. Կասպար Ուայնբերգերը կարեւորեց Ադրբեջանին մարդասիրական եւ գլխավորապես ռազմական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը:

Ամերիկա-ադրբեջանական բանակցությունների հողն էլ ավելի պարարտացնելու նպատակով ընդարկվեց նաեւ «Նոր մեհտսի ճանապարհի» հարցը. որի նպատակն է Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի տարածաշրջաններից մեկուսակաուղղված կերպով փորձում է մեր երկիրը ներկայացնել որպես միջազգային ահաբեկչության պաշտպան պետություն Իրանի եւ Լիբիայի օրինակով: Այս ամենի շնորհիվ Ադրբեջանը նպատակ ունի Հայաստանին մեկուսացնել Արեւմուտքից. իսկ «Նոր մեհտսի ճանապարհի» գոյության դեպքում նաեւ Ռուսաստանից:

Հաշվարկը հետեւյալն է. այսօր ռազմական գործողությունները հակասում են թե Ադրբեջանի եւ թե Հայաստանի շահերին: Պատերազմն ինքնին ենթադրում է «ներդրումային փախուստ» Ադրբեջանից եւ հանրապետության բացահայտ սնանկացում: Այսպիսի հեռանկարը սթափում է Ադրբեջանին ինչ-որ կերպ պահպանել զինադադարը եւ փոխարենը հզորանալ տնտեսապես: Ներգրավումը «Նոր մեհտսի ճանապարհի» ծրագրի մեջ կարող է զգալիորեն. նույնիսկ բախտորոշ կերպով խթանել հանրապետության տնտեսության զարգացումը: Միեւնույն ժամանակ. «մեկուսացված Հայաստանը». որն իր հերթին պարտադրված է ամրացնել թիկունքը (այսինքն նույնպես զարգանալ) հայտնվում է ծայրահեղ անբարենպաստ պայմաններում: Վերջ ի վերջո. իրողությունն այն է. որ հավասարապես ներգրավելով հարթում է նաեւ տնտեսապես հզոր թիկունք ունեցող պետությունը: Հեյդար Ալիեւի հաշվարկը նպատակ ունի դիվանագիտական հաջողությունը վավերացնել նաեւ տնտեսական հարթանակով: Այս պարագայում նա ընդարձակում է ԵԱՀԿ ծրագրերը եւ դենվերյան հայտարարության դրույթները. որպեսզի դրանք ընդունվեն վերջնականապես:



Միեւնույն ժամանակ. Հեյդար Ալիեւը չի կարող լրիվ անտեսել ԱՄՆ-ում գործող հայկական լոբբին: Նա բաց գիտակցում է. որ եթե նավթային լոբբին ունի 50 նպատակ. իսկ կասպիական հարցական նավթը այդ նպատակներից կամ ուղղություններից ընդամենը մեկն է. ապա հայկական լոբբին կողմնորոշված է մեկ ուղղությամբ եւ դրանով իսկ ավելի հզոր է: Հենց սրանով է բացատրվում Ադրբեջանի նախագահի բարյացակամությունը ԱՄՆ-ի հրեական կազմակերպությունների հանդեպ. եւ նրա նման քայլը արդարացված է:

Այնուամենայնիվ. Հեյդար Ալիեւն իր ողջ քաղաքականությունը կառուցում է սոսկ նավթային գործոնի վրա. եւ հենց սա է Ադրբեջանի վիճակի գլխավոր մտահոգությունը: Այսօր արդեն նավթն իբրեւ վառելիք ունի այլընտրանք եւ բացի այդ. կասպիական նավթի խնդիրը արհեստածին է: Այսօր որեւէ տարածաշրջան չունի նավթի կենսական պահանջ. եւ Բաքվի նավթի մասին վարկածը՝ իբրեւ քաղաքականության ծնունդ. որը հանգամանքների բերումով կարող է եւ չգործել:

ԱԲԵՍ ԴԱՇԵՆՅԱՆ

տավ շղթայազերծվեց Եվրոպայում եւ Ամերիկայում: Դա հասարակական կարծիքի վերից՝ պաշտոնական, կառավարման փայլուն օրինակ էր: Մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, հասարակական «գիտությունը», մարդու իրավունքների «պաշտպանների» խմբեր-բոլորը համատեղ ձայնակցում էին պաշտոնական քաղաքականությանը՝ «մերկացնելու» համար սերբերին, որոնք համարձակվել էին ոտքի կանգնել սեփական պաշտպանական հողերը պաշտպանելու, եւ որոնք, իբր, հալածում էին Բոսնիայի մուսուլմաններին: Իսկն ասած, սրանք ամենաիսկական օղուգական թուրքեր են, XVI դարի արշավանքներից հետո Եվրոպայում արմատ նետած: Եվրոպական մայրաքաղաքներում, հատկապես Փարիզը խիստ ակտիվ եղավ, օրեր շարունակ տեւող հեռուստատեսային հաղորդումների շարքերին մասնակցում էին Ամերիկայի եւ Եվրոպայի կատարողական արվեստի փառաբանված աստղերը: Սերբերին դատապարտելուն զուգահեռ, դրամ էր ժողովվում հալածական բոսնիացիների օգտին:

Այսօր իսկ, մամուլը եւ հեռուստատեսությունը լեցուն են հաղորդումներով այն մասին, թե ինչպես են ՆԱՏՕ-ի զինվորները ամբողջ Սերբիայով մեկ որսում բոսնիացիների նկատմամբ «զանգվածային կոտորածների» կազմակերպիչներին: Արեւմուտքը նույնիսկ սպառնում է դադարեցնել մարդասիրական օգնությունը մինչեւ որ «հանցագործները» ի՛ ձեռք չհանձնվեն: Այ քեզ «մարդասիրակա՞ն օգնություն»: Այս ամենը այլ բան չէ, քան իր պատմական հայրենիքը պաշտպանող սերբ ժողովրդին մարտական ուժից ու ոգուց զրկելու փորձ:

Ինչո՞ւ, այնուամենայնիվ: Պատմական տարողության մի իրողություն գլուխ բերելու համար: Դարեր շարունակ Եվրոպա թափանցել ձգտող Թուրքիային չհաջողվեց զենքի ուժով ստեղծել իր մի պետությունը այդ ափխարհամասի կենտրոնավայրում, իսկ այսօր. Արեւմուտքի զորավոր ձեռքով ստեղծվեց թուրքական այդ կարգի պետություն՝ Բոսնիան: Կատարվածը. պատնական ոճանկարը տեսակետից. ըստ էության ինքնապաշտպանական քայլ է: Բայց Արեւմուտքն այսօր դա դիտարկում է իբրեւ խոշորագույն մի հաղթանակ. քանի որ ծունկի եկավ ռուսական դիվանագիտությունը: Իսկապես էլ, 1878 թ. Բեռլինի խորհրդաժողովից հետո, դա ռուսական դիվանագիտության ամենախայտառակ պարտություններից մեկն է:

Բայց իրո՞ք սերբերը ցեղասպանության կազմակերպիչներ էին թուրք եւ խորվաթ ազգաբնակչության նկատմամբ: Նույն այդ թուրքերը նախկինում չէի՞ն ոչնչացրել սերբերին, կամ երկրորդ աշխարհամարտի օրերին նույն այդ խորվաթները արյան բաղնիք չէի՞ն սարքել սերբերի նկատմամբ: Արեւմուտքի քաղաքականության համար սրանք պարզապես հարցեր են, եթե դիտարկում են իրենց թիրախած նպատակին:

Իսկ ահա թե ինչ է պատմում հույն պատգամավոր Բանտուվասը. «Բալկաններում ծագած պատերազմի ընթացքում այցելեցինք Բոսնիա, ուղղափառների եւ մուսուլմանների երջանը, եւ համոզվեցինք, որ այնտեղ կրկնվել են ժողովուրդների բնաջնջման այս նախօրինակները: Կրկնվեց նույն դեղատոմսը: Այնտեղ կան երջաններ, լճեր, ավազաններ, ուր մուսուլմանների ձեռքով թաղված են հարյուրավոր ուղղափառներ: Նրանք կիրառում են, կրկնում եմ, նույն քաղաքականությունը, ինչ՝ թուրքերն այն ժամանակաշրջանում, որին նվիրված է խորհրդարանի ներկա քննարկումը» (այսինքն՝ հայոց ցեղասպանության երջանում):

Դիմենք, սակայն, համաշխարհային կարգի ամենախոշոր հեղինակություններից մեկին՝ Վիկտոր Հյուգոյին, որի վկայությունները հիշյալ քարոզարշավի կազմակերպիչները «մոռացել» էին հրապարակ հանել: Հյուգոն եվրոպայի խաղաղության մեծագույն պաշտպաններից մեկն էր եւ միասնության ջատագով: Հենց նա էր, որ 1851 թ. հուլիսի 17-ին առաջին անգամ արտասանեց «Եվրոպայի միացյալ պետություններ» բանաձեւը, ուր ըստ նրա «մտքերի եւ ապրանքների փոխանակման շուկաներից զատ ճակատամարտերի ուրիշ դաշտեր չեն լինի»:

Բայց, իրերի տրամաբանությամբ, Վ. Հյուգոն իր հակաթուրքական հայացքներով հանդես եկավ այն շրջանում, երբ պաշտոնական քաղաքականությունը արդեն լքել էր այդ դիրքերը, ընդհակառակն, անցնելով Թուրքիային աջակցելու եւ հովանավորելու քաղաքականության: Հյուգոյի մտքերն ու վկայությունները այլեւս ծեռնտու չէին, խոսոր էին ընթանում Եվրոպայում տիրող քաղաքական վարքի համեմատ: Ահա թե ինչու, այդ վիթխարի հակասերբական քարոզարշավում տեղ չգտնվեց Հյուգոյի ճշմարիտ խոսքի համար:

Հենց Հյուգոն է, սակայն, թողել ամենաիրական վկայությունը, թե ինչ են կատարել թուրքերը Սերբիայում 1870-ական թվականներին: Դենի դը Ռուժմոնը իր գրքում բերում է հետեւյալ հատվածը.

«Անհրաժեշտ է դատնում կառավարությունների ուշադրությունը հրավիրել մի փոքրիկ բանի վրա, որը, ըստ երեւույթին, նրանք չեն նկատել: Ահա այդ փաստը. սպանում են մի ժողովուրդ: Որտե՞ղ: Եվրոպայում: Վկանե՞ր կան: Ընդամենը մեկը. ամբողջ աշխարհը: Իսկ կառավարությունները տեսնո՞ւմ են: Ո՛չ:

...Այս պահին, մեզ մոտիկ, այնտեղ, մեր հայացքի առջեւ, կոտորում են, հրդեհում, թալանում, բնաջնջում, հայրերին ու մայրերին մորթում, փոքր աղջիկներին ու տղաներին վաճառում... ծծկեր երեխաներին սրով երկու կես են անում... Ընտանիքներ են այրում իրենց տների մեջ: Բոլակ քաղաքի բնակչությունը մի քանի ժամում ինը հազարից դարձել է հազիվ երեք հարյուր... գերեզմաններում այնքան դիակ է լցված, որ թաղել չեն կարող, այնպես որ մեռածներն իրենց կոտորողներին ժանտախտով են վարակում: Մենք հայտնում ենք եվրոպայի կառավարություններին այն, թե թուրքերը պատռում են հղի կանանց որովայնը, որպեսզի երեխաներին արգանդի մեջ մորթեն, որ հրապարակներում փորը պատռած կանանց կույտեր են բարձրանում, որ շները կրծում են բռնաբարված աղջիկների գանգերը, որ այս ամենը տոսկալի է, որ եվրոպայի կառավարությունների մեկ շարժումը բավական կլինի թուրքին կանգնեցնելու, եւ որ այս տոսկալի ոճրագործը կատարող գազանները ահարկու են, որ քաղաքակրթվածները, որոնք թույլ են տալիս նրանց այս բաներն անել, տոսկալի են» (էջ 248):

Կառավարություններն, անշուշտ, չշարժվեցին իրենց դաշնակցի դեմ: Ոճրագործները չպատժվեցին: Եվ դեռ ավելին, հարյուր տարի անց հենց սերբերին մեղադրեցին իբրեւ ոճրագործների նույն կառավարությունների անմիջական աջակցությամբ:

Ճանոթ, բայց որքան ծանոթ պատմություններ են սրանք:

Այսպիսով եվրոպայի կենտրոնական տարածքներից մեկում ստեղծվեց մի նոր թուրքական պետություն: Այս ընթացքով գնալու պարագայում հաջորդ ձոիը ո՞րն է լինելու: Թերեւս Գերմանիան, ուր արդեն իսկ 5 միլիոնի հասնող թուրք բնակչություն կա, որը ստեղծել է իր հասարակական-մշակութային ենթակառույցները, իսկ որ գլխավորն է՝ «Գորշ գայլերի» կուսակցության մի զորավոր կազմակերպություն:

Վերհիշենք կրկին իսպանացի հումանիստ Վիվեսի սարսափած ազդարարությունը XVI դարում. «Նախեւառաջ պետք է համատեղ աշխատել, որպեսզի թուրքը Գերմանիան չզավթի, թե ոչ այլեւ հույս չի լինի, թե ամբողջ Արեւմուտքը չի ընկնի թուրքերի ձեռքը...» Արեւմտյան տերությունների վարքի տրամաբանությունն էլ հենց կոչված է նպաստելու նման մի երեւի: Իրենք, թուրքերն էլ զանազան առիթներով հոխորտում են, թե XXI դարը լինելու է թուրքերի դար: Ռուսաստանի դեմ ածեցրած ոսկորը ի վերջո խրվելու է նույն Արեւմուտքի կոկորդը:

Իսկ մինչ այդ եվրոպայի միասնությունը շարունակում է քարոզվել: Այդ գործի ավարտաժամը, ըստ Դենի դը Ռուժմոնի, սպասում է դարձյալ արտաքին առիթի: Ռուժմոնը բերում է Օրտեգայի միտքը, ըստ որի այդ առիթ «կարող է լինել Ուրալի այն կողմից հայտնված չինացու խսիրը, կամ ավելի շուտ, իսլամական ծովածավալ մագմայի ցնցումները» (էջ 378):

Արդյոք շատ ուշ չի՞ լինելու եվրոպա կառուցելու համար:

ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՐՅԱՆ
Քանասիրական գիտությունների դոկտոր

ԱԶԳ

Մշակույթ

Ստավորականներ կան, որոնք ավարտած իրենց աշխատանքային կենսագրությունը, այժմ ապրում են մեզ հետ, անհավակնոտ, համեստ աննկատ: Մարդիկ, որոնք իրենց անցյալի ազգային ծառայությունների ու վաստակի համար այսօր պահանջներ չեն ներկայացնում: Նրանք ապրում են մենության, արժանապատիվ առանձնության մեջ, այն մխիթարող համոզմունքով, որ իրենց համայնքի ու ժողովրդի համար արել են այն, ինչ կարողացել են, տվել են այն, ինչ ստացել են Աստծուց ու մայր ժողովրդից: Մարդիկ, որոնք, իբրև բերի հող, ստացածի դիմաց տվել են բազմապատիկ ավելին:

Մտավորականների այս դասից է արժանապատիվ Տեր Կոմիտասը, որի ծննդյան 80 ամյակը լրացավ այս տարի, մայիսին:

Կոմիտաս Ա քհն. Շիրինյանը ծնվել է 1917-ին, Կիլիկիայի Աղանա քաղաքում, հարազատ Համբարձումի ընտանիքում: 1921-ին բռնագաղթում է Լիբանան, Բեյրութ: 1931-ին 14-ամյա Կարապետը ավարտում է տեղի Ս. Նշան ազգային վարժարանը եւ նույն տարին հատուկ հանձնարարականով ուղարկվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարան ուսանելու: «Այստեղ, հիշում է Տեր Կոմիտասը, Սրբոց Հակոբյանց վանքի դարավոր կամարների տակ, արքայական բուրող միջավայրում տվիրեցի յոթը տարի, եւ 1939-ին, Ամենապատիվ Մեծարգոյ պատրիարք Նշանյանի ձեռամբ ընդունեցի վարդապետական կարգ ու կոչում: Աղա՛ իբրեւ լավագույն գնահատական իմ երաժշտական ունակությունների, պատրիարք հայրը ճակատս օծեց Կոմիտաս անունով»:

Շատ շուտով նրան է վստահվում ժառանգավորաց վարժարանի ուսուցչության եւ եկեղեցու գլխավոր դպրապետության գործը, որտեղ մնում է սիրով, հմտությամբ, եռանդով եւ որի համար արժանանում է լուրջ գնահատանքի:

1942-ին Կոմիտասը Յաֆայի հայ համայնքի հոգեւոր հովիվն էր եւ Ս. Գլխագիր վարժարանի պատասխանատու ուսուցիչը: Ամբողջ հինգ տարի երիտասարդ վարդապետը ջանք չի խնայում հայ եկեղեցու դայծառության եւ հայ դպրոցի առաջադիմության համար:

1939-1947 տարիների ընթացքում Կոմիտաս վարդապետը վայելել է Վահան Թեքեյանի, Հակոբ Օշականի, Շահան Բերբերյանի եւ այլ հայ նշանավոր հոգեւորականների եւ մտավորականների ոգեշնչող մտերմությունը, որոնք նրա մեջ տեսնում-գնահատում էին հայ հին հոգեւոր եւ ժամանակակից աշխարհիկ երաժշտության փայլուն գիտակին, կատարողին եւ մեկնաբանին:

1947 թվականը բեկումնային տարի էր Կոմիտաս վարդապետի կյանքում: Ներանձնական դայթարներից եւ դառնախոով ապրում-տառապանքներից հետո, «սաստիկ ընդվզումի պահին», նա որոշում է հրաժարվել կրոնական կյանքից, ընտանիք կազմել եւ մնալով հայրենիք:

1947-ի նոյեմբերին Կոմիտասն իր կնոջ հետ Հայաստանում էր: Մեծ բարեբախտություն, որ Գեւորգ Զ Չորեքյան կաթողիկոսը նրան է վստահում Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի վերակացությունը:

Կոմիտաս ավագ քահանա Շիրինյան

Ծննդյան 80-ամյակի առթիվ



Հազիվ երկու տարի է տեւում բախտավորությունը: Վրա է հասնում Պետական անվտանգության մարմինների միջամտությունը եւ կասեցվում է Կոմիտասի պաշտոնավարությունը ճեմարանում:

Մայր աթոռ Ս. Էջմիածնի համար ծանր տարիներ էին: Ներքին թեմերում հաստատես կարիք կար մեծ թվով պատրաստված, նվիրյալ հոգեւորականների, իսկ այդպիսիք դառնալուց մարդիկ, հաստատես երիտասարդներ, զգուշանում էին, հեռու մնալով Էջմիածնից ու եկեղեցուց: Այս պայմաններում Գեւորգ Զ Վեհափառ հայրապետը նորից իր մոտ է հրավիրում Կոմիտասին: Նախ նրան վերահաստատում է ճեմարանում հոգեւոր երաժշտության ուսուցչի պաշտոնում, ապա առաջարկում իբրեւ ամուսնացած քահանա, համատեղությամբ ծառայել Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում: Կոմիտասը 1971-ին երախտագիտությամբ է ընդունում Վեհի առաջարկությունը եւ մոտ 20 տարի սիրով, նվիրումով եւ հմտությամբ համատեղում է ճեմարանում դասախոսի, իսկ եկեղեցում հոգեւոր հովվի ծառայությունները:

Մենք, Տեր Կոմիտասի հոգեւոր եւ դասախոսական գործունեությանը մոտ ծանոթներս, պարտավոր ենք վկայել, որ նա Երեւանի մտավորական եւ բարձր շրջանակներում խորապես հարգված, բարձր գնահատված եւ միշտ փնտրված հոգեւորական էր:

Պարտավորվում ենք չմոռանալ, այլ միշտ հիշել Տեր Կոմիտասի ծառայությունը խորհրդային իշխանության տարիներին, Հայ առաքելական եկեղեցու վարկի եւ հեղինակության բարձրացման նուրբ, կարեւոր գործում:

Այստեղ չեմ կարող չվերհիշել երաժշտական մտերմիկ մի երեկո, որը կազմակերպել էին Տեր Կոմիտասն ու իր մայրության ու ճաշակի ընկեր ու լծակից Հռիփսիմե Երեցկինը, Երեւանի «Արաբկիր բլուր» կոչված թաղամասի իրենց քարաշեն տան սրահում: Հրավիրել էին հայ հոգեւոր երգն ու ազգագրական երաժշտությունը սիրող-գնահատող մոտ 20 մտավորականների, որոնցից 35-40 տարի հետ հիշվում են բանաստեղծ Վահագն Դավթյանը, Վիգեն Խեչումյանը, Օհան Դուրյանը, Արամ Արմանին, Գյուլյան, Քեհիշյան եւ Բեկմեզյան Գրիգորները:

Այս երեկոյից հետո ինձ համար դարձավ հանգիստ, անդորրավետ, ինքնամոռաց ունկնդրություն, ինչպես նաեւ ինքնամոռաց ինքնարտահայտում: Ինչպիսի՜ հոգեւոր հանգիստ, ինչպիսի՜ հոգեւոր ինքնարտահայտում: Ինչպիսի՜ հոգեւոր ինքնամոռացում:

ԱԶԳ

Մարզական

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ի՞նչ արժե արծաթե պարգևը

Կամ կնվաճի՞ Յյուդոն առաջատար դիրքեր հայրենական ապորտում

Վերջերս Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում անցկացվեցին Եվրոպայի երիտասարդության օլիմպիական օրեր, որին մասնակցեցին նաեւ Հայաստանի պատվիրակները: Մարզասերներն անհուսահիասում են, որ մեր մարզիկներից ստուգատեսում առավել հաջող հանդես եկան Յյուդոյիստները: Զրուցակիցս Յյուդոյի Հայաստանի հավաքականի ավագ մարզիչ Դավիթ Խիբարյանը պատմում է մրցումներում իր սաների ելույթների, նրանց նախապատրաստության մասին, ինչպես նաեւ անդրադառնում մարզաձեւի առջեւ այսօր Հայաստանում ծառացած խնդիրներին:

– Յյուդոյիստները պայքարի պորտ ներգրավվեցին հուլիսի 19-23-ը: Հայ մարզիկները մասնակցեցին 50, 55, 60, 65 եւ 71 կգ քաշային մրցավեճին: Առաջինը տասամի դուրս եկավ հրազդանցի Վարուժան Իսրայելյանը (71 կգ): Նրա անդրանիկ մրցակիցը Ուկրաինայից էր: Պետք է նշեմ, որ Վարուժանը քաշով ավելի թեթեւ էր ուկրաինացուց եւ սա էլ վճռական նշանակություն ունեցավ: Հայ Յյուդոյիստը բավականին համառ դիմադրություն ցույց տվեց մրցակցին, սակայն զոտեմարտի վերջում վրիպում թույլ տվեց եւ մաքուր հնարով պարտվեց:

Հաջորդ օրը մրցագորգում ուժերը փորձեցին նորահաստատ Գեղամ Եղյանը (65 կգ) եւ Երեւանի Զեյթուն-Քանաքեռ թաղամասերի թիվ 2 մարզադպրոցի եւ իմ անձնական սան Ալեքսանդր Գրիգորյանը (60 կգ): Գեղամը պատրաստ չէր մրցաշարին, սակայն Ֆեդերացիայի կոլեգիայի պնդմամբ նա ընդգրկվեց թիմում: Սա շատ տաղանդավոր տղա է (մինչ այդ հաջող էր հանդես եկել Ֆրանսիայում), բայց վնասվածքի պատճառով լավ մարզավիճակում չէր: Դա էր պատճառը, որ առաջին իսկ զոտեմարտում մաքուր գոտնով զիջեց ղորտուգալացուն:

Գրիգորյանը առավելության հասավ զվեյցարացի եւ Բելգիան ներկայացնող քուրք յյուդոյիստների նկատմամբ եւ հաջող փուլում հանդիպեց իտալացու: Հետաքրքիր է, որ մրցակիցների պայքարն ավարտվեց ոչ-ոքի եւ, ըստ կանոնների, հաղթողը որոշվեց մրցավարների քվեարկությամբ: Եղեք մրցավարներն էլ միաձայն հաղթանակը շնորհեցին հայ յյուդոյիստին: Կիսաեզրափակիչում Ալեքսանդրը ցավալի պարտություն կրեց հոլանդացուց եւ 3-րդ տեղի համար մրցամարտում հանդիպեց Ֆրանսիացի յյուդոյիստին: Գրիգորյանն, ըստ երեւույթին, հոգնել էր, եւ զոտեմարտը պասիվ անցկացնելու համար նկատողություն ստացավ (խանգարումակի) ու զրկվեց բրոնզե մեդալից: Այնուհետեւ Հայաստանի մարզական պատվի պատասխանատվությանը ձեռնամուխ եղան Զեյթուն-Քանաքեռ թաղամասերի նույն մարզադպրոցի սաներ Ղազարոս Գրիգորյանը եւ Սուրեն Աղաջանյանը: Սուրենը պարտվեց առաջին իսկ մրցակցին զվեյցարացի յյուդոյիստին, բայց ոչ թե պայքարում, այլ նկատողությունների թվով:

Ղազարոսին, որ եւս իմ անձնական սանն է, առաջին զոտեմարտում դիմակայում էր Թուրքիայի պատվիրակը: Հատկանշական է, որ առաջին իսկ վայրկյաններից (մեզ համար եւս անսպասելիորեն) մարզասերները աջակցեցին Գրիգորյանին Armenia վանկարկումներով: Եվ տղան վարձահատույց եղավ, 15 վայրկյանում տանելով գեղեցիկ հաղթանակ: Հաղթանակի հոգեբանական լիցքն այնքան մեծ էր, որ Ղազարոսը վերելքով անցկացրեց հաջորդ զոտեմարտերը եւս, պարտության մատնելով հոլանդացի եւ իտալացի մարզիկներին: Եզրափակիչում նա ուժերը չափեց ուկրաինացու հետ: Պետք է նշեմ, որ վստահ էի սանիս հաղթանակին: Եվ ամեն ինչ ընթանում էր ըստ ծրագրածի: Սակայն պահերից մեկում նա տակտիկական սխալ թույլ տվեց, որից էլ օգտվեց մրցակիցը եւ կայծակնային արագությամբ կատարած հակահնարով հաղթանակի հասավ: Ինչեւէ, սա մեր առաջին հաջողությունն է յյուդոյում եւ չափազանց ուրախ ենք նվաճած արծաթե մեդալի համար:

Դավիթ Խիբարյանը եւ Ղազարոս Գրիգորյանը եզրափակիչ զոտեմարտից հետո

– Սպասո՞ւմ էիր, որ պարգեւով կվերադառնամ հայրենիք:

– Այո, որոշակի ակնկալիքներ կային հատկապես կողված Գրիգորյան եղբայրների հետ: Կարող եմ ասել, որ նրանք Հայաստանի հույսն են աղագա խոշոր մրցումներում: Հետաքրքիր է, որ Ղազարոսը մրցավայր էր մեկնել սեփական միջոցներով, իսկ Ալեքսանդրի ճանապարհածախսի գումարի կեսից ավելի տրամադրել էր ՀԱՕԿ-ը: Պատճառներից մեկն այն էր, որ եղբայրները անձնական սաներս են եւ դա բուռն վիճաբանությունների տեղիք տվեց հանրապետական ֆեդերացիայի մարզչական կոլեգիայում: Եվ նրանցից մեկի մեկնումը մրցավայր մեծ հարցականի տակ էր: Պետք է նշեմ, որ Հայաստանում հավաքականի ավագ մարզիչ հասկացությունը խորհրդանշական բնույթ է կրում: Փաստորեն ես չեմ որոշում թիմի կազմը, նախապատրաստական ծրագիրը: Իմ կարծիքը առաջնային չի համարվում, այլ ղեկավարների: Բայց քանի որ պաշտոնյան միշտ չի կարող զսնվել մարզիկի կողքին, ծանոթանալ նրա խնդիրներին, ապա նրանց կարծիքը ինչ-որ տեղ սուբյեկտիվ է: Ենթադրենք, թե Ղազարոսը Լիսաբոն չմեկներ, ուրեմն եղած մեդալից էլ զրկվելու էինք, հերթական անգամ վերադառնայինք դատարկաձեռն ու նորից պարապմունքի ենթարկվեինք վաս աշխատելու համար: Բայց փաստորեն մենք ամեն ինչ էլ կարող ենք անել, ուղղակի բացակայում է կառուցված-քային ճիշտ որոշումներ ընդունելու հնարավորությունը:

Ուզում եմ ավելացնել, որ եթե նախամրցումային փուլը ճիշտ կազմակերպվեր ոչ թե մեթոդական, այլ մարզումային աշխատանքի ծրագրավորման առումով (մրցումներ, ընկերական մրցամարտեր), ապա մեղայների քանակը մոտ 3 անգամ կլիներ: Նախապատրաստական փուլում չենք մասնակցել ոչ մի միջազգային մրցաշարի, չեն կազմակերպվել ուսումնա-մարզական հավաքներ: Ամեն ինչ արվել է իմ եւ սաներիս ծնողների ջանքերով: Մրցակցական զոտեմարտեր ենք անցկացրել «Հայաստան» ՄՄ մարզադահլիճում, ընդհանուր ֆիզիկական պատրաստականության պարապմունքներ: Զեյթունի մարզադպրոցում, իսկ ավարտական փուլը կազմակերպել ենք Աբովյանի մարզադահլիճում: Մինչդեռ մեզանից տնտեսապես ավելի վաս վիճակում գտնվող երկրների (Վրաստան, Բելառուս) հավաքականներ մոտ 7-8 միջազգային մրցաշարերի են մասնակցել նախապատրաստական փուլում, ուսումնա-մարզական հավաքներ անցկացրել արեւմտյան զարգացած երկրներում: Կարծում եմ, ժամանակն է, որ մեր երկրի պատասխանատուները եւ գործարարները սկսեն աջակցել հեռանկարային մարզաձեւերի, այդ թվում մենաթաղային զարգացմանը: Մեծ հույսեր եմ կապում մեր բազմաթիվ Ռուբեն Սիլոյանի հետ: Նա արդեն մեկ անգամ օգնել է մեր բազի երեխաներին մասնակցելու մրցումների եւ տղաներն էլ իրենց հերթին բարձր են պահել երկրի մարզական պատիվը: Պատկերացրեք, անհրաժեշտ մարզագույքի եւ մարզաբազաների առկայության դեպքում որքան ավելի արդյունավետ կլիներ աշխատանքը: Հուսով եմ, որ կգտնվեն մարզաձեւին նվիրված մարդիկ, որոնք թույլ չեն տա այս տաղանդներին անհետ կորել ու, երեւի, ինչ-որ տեղ նրանց օգնության շնորհիվ այս պատանի յյուդոյիստներից լավագույնները 2000 թ. կմասնակցեն Սիդնեյի օլիմպիական խաղերին:

Կուզենայի մեկ ոչ պակաս կարեւոր խնդրի էլ անդրադառնալ: Հավաքականը չունի մերսող-բժիշկ: Բավական է նշել, որ Պորտուգալիայում թիմերից յուրաքանչյուրը տարբեր մարզաձեւերի հավաքականում իր առանձին բժիշկն ուներ: Ի դեպ, մեզ հետ բավականին մտերմացել էր Իսպանիայի հավաքականի բժիշկը, որը ժամանակին ուսանել էր Մոսկվայում եւ տիրապետում էր ռուսերենին: Չգիտեմ՝ հայկական կոնյակի ուժի՞, թե՞ այլ գործոնի շնորհիվ նա հաճախ ավելի շատ ուշադրություն էր դարձնում մեր հավաքականի տղաներին, ինչ-որ տեղ աչքաթող անելով իսպանացիներին:

– Աղագայի ի՞նչ ծրագրեր ունեք:

– Սեպտեմբերի 25-26-ը պատանիների եւ երիտասարդների միջազգային մրցաշարի ենք մասնակցելու Մարսելում, որի ավարտից հետո տեղի հայ համայնքի միջոցներով ուսումնա-մարզական հավաքներ կանցկացնենք: Նախապատրաստվելով Փարիզում կայանալիք աշխարհի առաջնությանը: Կարծում եմ սա մրցափորձի ամրապնդման եւ վարպետության աճի հիանալի առիթ է:

ՏԻԳՐԱՆ ԳԱՉԱՐՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

Հայտեր՝ աշխարհի երեւանյան առաջնությանը

Թեեւ դեռ ուղիղ 50 օր կա մինչեւ Երեւանում անցկացվելիք մինչեւ 16 եւ 18 տարեկան պատանիների եւ աղջիկների շախմատի համաշխարհային առաջնության մեկնարկը, բայց արդեն շատ երկրներ շտապում են հաստատել իրենց մասնակցությունը:

Առաջին պաշտոնական հայտը աշխարհի առաջնության կազմկոմիտեն ստացավ Ամերիկայի Միացյալ Նահանգների շախմատային ֆեդերացիայից: Հաճելի է, որ շախմատային այս հզոր տերության ներկայացուցիչներից մեկը երեւանյան առաջնությունում կլինի Լոս Անջելեսի «Արմենիա» շախմատային ակումբի եւ հմուտ մարզիչ Նշան Քեչիշյանի սան, ԱՄՆ-ի դպրոցականների բազմակի չեմպիոն Հարություն Հակոբյանը:

Օգոստոսի 1-ի դրությամբ անվանական հայտեր են ներկայացրել 11 երկրներ՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Կուբան, Լյուքսեմբուրգը, Թուրքիան, Հունգարիան, Հունաստանը, Հնդկաստանը, Խորվաթիան, Անգլիան եւ Իտալիան:

Գ. Հ.

Աբեմում արդեն ռեկորդներ են գրանցվել

Մայք Ջոնսոնը 200 եւ 400 մետր վազքատարածությունում աշխարհի չեմպիոնը ԱՄՆ-ից եւ նրա հայրենակից 100 մետր մրցատարածությունում Ամերիկայի չեմպիոն Մաուրիզ Գրինը ծիծաղում են մարզուլի տուլիսի ընթացքում, որը կայացավ բերեւ աշխարհի 6-րդ առաջնության մեկնարկից առաջ

Երեկ Աբեմում մեկնարկեց բերեւ աշխարհի առաջնությունը: 200 ազգային պատվիրակությունների անդամներ են ժամանել Հունաստանի մայրաքաղաք: Նախորդին բերեւ աշխարհի միջազգային ֆեդերացիայի (IAAF) ղեկավարությունը, նախագահ Պրիմո Նեբեոլայի գլխավորությամբ, դիմավորեց ամենախառնուր հյուրին՝ ՄՕԿ-ի նախագահ, մարկիզ Խուան Անտոնիո Սամարանչին: Այնուհետեւ Նեբեոլայի ղեկավարությամբ տեղի ունեցավ IAAF նստաշրջանը, որում նշվեց, որ առաջնությունների անցկացման պատմությունում սա արդեն դարձել է ամենաներկայացուցչականը: Բացի այդ՝ նրա ընթացքին կհետեւեն առավելագույն թվով հեռուստադիտողներ՝ 3 միլրդ մարդուց ավելի:

Հիմնական հարցերից մեկը վերաբերում էր դոպինգ-սուրգմանը: Արդեն հայտնել ենք, որ որակազրկման նվազագույն ժամկետը սահմանվել է 2 տարի: Մարզիկները ստուգման կենթարկվեն ցանկացած ժամանակ եւ ցանկացած վայրում, անկախ նրանից՝ մարզվո՞ւմ, թե՞ մրցումների են մասնակցում: Օրգանիզմում դոպինգի առկայությունը պարզելու համար կստուգվի մասնակցի արյան բաղադրությունը:

Առաջնությունում գրանցվել է եւս մեկ դրամական ռեկորդ: Առաջին անգամ մրցումների պատմությունում հաղթող դարձած մարզիկը կարող է մի քանի միլիոն դոլար վաստակել: Հաղթողներին պարգեւատրելու որոշումը վերջ դրեց դրամական հարցերի վերաբերյալ կուլիսների ետեւում ընթացող խոսակցություններին: Նշենք, որ նման լուրեր տարածվում էին բոլոր մրցումների ընթացքում: Աբեմում ոսկե մեդալի նվաճած մարզիկը զուգահեռ կհարուստանա 60 հազար դոլարով: Արծաթե մրցանակակիրը կստանա 30 հազար «կանաչ», իսկ բրոնզին արժանացածը՝ 20 հազար: Պարգեւ է սահմանված նաեւ համաշխարհային ռեկորդի համար՝ 100 հազար դոլար:

ԼՈՒՐԵՐ

Յան Ուլերիխը չի զիջում դիրքերը

«Տուր դե Ֆրանսում» տարած հաղթանակից հետո գերմանացի հեծանվորդ Յան Ուլերիխը կրկին մեկնարկ դուրս եկավ եւ շահեց «Ալբաս» թերթի մրցանակների խաղարկության կրիտերիումը, որն անցկացվեց Ֆրանսիայում: Այս մրցումների երկրորդ եւ երրորդ մրցանակակիրներ դարձան «Մեծ շրջանում» գերմանացու մրցակիցները, համապատասխանաբար ֆրանսիացի Կրիստոֆ Մանժինը եւ ուկրաինացի Սերգեյ Ուշակովը:

Ռիդլեն կխաղա «Լիվերպուլում»

Դորտմունդի «Բորուսիայի» կազմում Չեմպիոնների լիգայի մրցաշարի անցած եզրափակիչի հերոս դարձած Կառլ-Հայնց Ռիդլեն հաջորդ մրցաշրջանում կփոխի իր թիմը եւ կտեղափոխվի անգլիական «Լիվերպուլ»: Գերմանական ասոցի հետ եռամյա պայմանագիրը բրիտանացիներին արժեցավ մոտ 3 մլն դոլար: Սակայն 31-ամյա ռմբարկուն արժանի է նման գումարի:

Կանոնան վերադառնում է... Բրազիլիա

Հռչակավոր երիկ Կանոնային, որ վերջերս անպարտելի որոշում ընդունեց թողնել մեծ սպորտը, հազիվ թե հաջողվի վայելել ընտանեկան անդորրը: Բրազիլական «Ֆլամենգո» ակումբը հետաքրքրվել է նրանով եւ դեմ չէ ձեռք բերել Կանոնային Ռոմարիոյի փոխարեն, որը տեղափոխվել է իսպանական «Վալենսիա»: Եթե Ֆրանսիացի ֆուտբոլիստը, որ մինչեւ վերջերս պատասխանում էր «Մանչեսթր Յունայթեդի» գույները, ընդունի բրազիլական թիմի առաջարկը, ապա նոր իրարանցում կառաջացնի իր յուրօրինակ անձի շուրջ:

Առաջատարները հանդիսական դարձան

Մայք Չանգ

Կանադայի Մոնրեալ քաղաքում անցկացվող ATP շարքից բենիսի մրցաշարի 3-րդ շրջանում ամերիկացի Մայք Չանգը պարտության մատնեց հայրենակցին՝ Ալեքս Օ'Բրայանին (4-6, 6-2, 6-3): Պայքարից դուրս մնաց նաեւ ավստրիացի Տոմաս Մուստերը, որը 2-6, 6-2, 4-6 հաշվով գիջեց ֆրանսիացի Ֆաբրիս Սանտարոյին: Մրցաշարում 4-րդ հանդիպումը կրող ռուսաստանցի Եվգենի Կաֆելնիկովը առավելության հասավ հարավաֆրիկացի Ռենե Ֆերեյրայի նկատմամբ՝ 7-5, 6-3: Ամերիկացի Քրիս Վուդֆորդը հաղթեց խորվաթ բենիսիստ Գորան Իվանիսեւիչին:

ԱԶԳ

Օրվա հետքերով

Մ. ՆԱԽԱՆԳՆԵՐ

64 կոնգրեսականներ դիմեցին Քլինթոնին՝ չհաջակցել Հեյդար Ալիևին

Սկիզբը էջ 1

Երեկ հայտնի դարձավ նաեւ, որ ամերիկյան «Էքսիմ» բանկը վարկեր է տրամադրելու Ադրբեջանին, որոնց ամերիկյան նավթային ընկերությունները վաղուց էին սպասում: Երեկ Հեյդար Ալիեւը հանդիպեց նաեւ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նյուտ Գինգրիչի հետ, որն, ըստ ադրբեջանական տեղեկությունների, խոստացել է վերացնել «Ազատության աջակցության ակտի» 907 բաժինը: Այսօր Հեյդար Ալիեւը նախագահ Քլինթոնին կխնդրի օգտագործել նախագահական իրավասությունները եւ վերացնել այդ պատժամիջոցը, սակայն, ըստ BBC-ի մեկնաբանի, Բիլ Քլինթոնը երկյուղում է ԱՄՆ-ի հայկական համայնքի պատասխան կոշտ հակազդեցությունից: Պատժամիջոցների վերացման փոխարեն Բիլ Քլինթոնը, ըստ BBC-ի մեկնաբանի, ամենայն հավանականությամբ կփորձի ընդունել տալ Ադրբեջանին մարդասիրական օգնություն ցուցաբերել թույլատրող օրենքի ընդունում, ինչը կթուլացնի գոյություն ունեցող պատժամիջոցները: Իսկ Հեյդար Ալիեւն ամերիկյան պաշտոնյաների հետ հանդիպումներում մատնանշում է այն փաստը, որ իր երկիրն ամեն կերպ աջակցում է Մ. Նահանգներին՝ Իրանին մեկուսացնելու հարցում:

«Իրանը միշտ բողոքում է, որ ես զարգացնում եմ իմ երկրի հարաբերությունները Մ. Նահանգների հետ, բայց ես անտեսում եմ այդ բողոքները: Փոխարենն Ադրբեջանը պատժվում է ԱՄՆ-ի կողմից: Նույնիսկ Հյուսիսային Կորեայի կոմունիստական վարչակարգն է ամերիկյան օգնություն ստանում, իսկ Ադրբեջանը զրկված է այդ օգնությունից», բողոքեց Հեյդար Ալիեւը: Սակայն 64 ամերիկացի կոնգրեսականների նամակն ուղղված Քլինթոնին լավատեսության հիմք չի կարող տալ Ալիեւին: Երկկուսակցական այս կոնգրեսական խումբը նախագահ Քլինթոնին ուղղված նամակում նշում է, թե հանդիպումն Ադրբեջանի նախագահի հետ ավելի կկարծրացնի նրա բանակցային դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում: Ամերիկյան թերթերը նշում են, թե իսկական պատերազմ է սկսվել Վաշինգտոնում հայկական եւ նավթային լոբբիների միջեւ: Որոշ թերթեր նշելով, որ պետք է վերացնել Ադրբեջանի դեմ սահմանված պատժամիջոցները, շեշտում են, որ անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ հայերի մտահոգությունները: Օրինակ, «Նայթ ոիդըրում» ամերիկացի հայտնի մեկնաբան Թոմաս Ռուբինը նշելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խորքային պատճառն Օսմանյան կայսրության կողմից 1915 թվականին իրագործված հայերի ցեղասպանությունն է, Մ. Նահանգներին առաջարկում է հաշտարարի դեր ստանձնել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ: Եթե այս դատական վերը բուժվի, այս վիրը կփակվի, ինչպես դա եղավ Գերմանիայի եւ Իսրայելի միջեւ, դա կարող է նաեւ կարգավորել հայ-ադրբեջանական հակամարտությունը, կարծում է մեկնաբանը: Ամերիկյան բոլոր թերթերը հատկապես առանձնացնում են ամերիկահայ լոբբիական խմբերի եռանդուն գործունեությունն Ալիեւի այցելության օրերին: «Ազատության աջակցության ակտը» չի վերանայվի առնվազն մինչեւ այս տարվա վերջը:

BBC. «ԱՇԽԱՐՀԱԾԱՅՆ»

Կրկին շեշտվել է մամուլի ազատ վիճակը Ադրբեջանում

1 ՕԳՈՍՏՈՍ, «ԱՇԽԱՐՀԱԾԱՅՆ»: Մամուլի ազատություններին հետամուտ նյույորքյան մի կազմակերպություն պահանջում է, որ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի վերացնի լրատվական միջոցների վրա իր երկրում հաստատված սահմանափակումները: Լրագրողների պաշտպանության կոմիտեն, որը ոչ կառավարական կազմակերպություն է, նամակ է հղել Հեյդար Ալիեւին հորդորելով այլեւս թույլ չտալ, որ քաղաքական ու զինվորական գրաքննությունը ճնշի Ադրբեջանում գործող լրագրողներին, հորդորելով նաեւ, որ վերջապես բացահայտվեն այդ երկրում լրագրողների վրա կատարված հարձակումների դեպքերը: Այդպիսի մի նամակ էլ հիշյալ կազմակերպությունն է ուղղել ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնին: Կազմակերպության ղեկավարը ԱՄՆ-ի նախագահին հորդորել է, որ վերջինս Ալիեւի ուրբաթ օրվա հանդիպման ժամանակ ճնշում գործադրի Ադրբեջանի նախագահի վրա այդ երկրում մամուլի ազատությունների խնդրի առնչությամբ: Լրագրողների պաշտպանության կոմիտեի ղեկավարը վերջերս է վերադարձել Ադրբեջանից, որտեղ մտահոգող փաստեր էր հավաքել: Այս կազմակերպության հաղորդման համաձայն, Ադրբեջանի մամուլն ու լրատվությունն ամբողջապես ենթակա են գրաքննության: Թերթերը հաճախ լույս են տեսնում դատարկ կամ սպիտակ էջերով, երբ արգելվում է տպագրել այս կամ այն նյութը, կամ էլ սուր քաղաքական հոդվածների փոխարեն էջերում սիրողաբար տեղադրվում է որեւէ ծաղրանկար: Իսկ հեռուստատեսային լուրեր պատրաստող լրագրողները պարտադրված են իրենց տեսաժապավենները նախապես տրամադրել իշխանությունների ներկայացուցիչներին: Անցած 2 տարում մի քանի լրագրողներ դաժան ծեծի են ենթարկվել՝ քաղաքական բանավեճի մեջ ներքաշված լինելու պատճառով: Այդքեր եւ Թուրան գործակալությունների համար աշխատող ադրբեջանցի մի լրագրողի սպանությունը, որը կատարվել է դեռ 95 թվականին, մինչ այժմ բացահայտված չէ:

ՄՈՍԿՎԱ

«Սպասվում է կովկասյան նոր պատերազմ»

Նեմցովին պատասխանելուց հետո Ժիրինովսկին նշեց Ժիրինովսկին

ՄՈՍԿՎԱ, 1 ՕԳՈՍՏՈՍ: **Արմենպրեսի սեփական թղթակից Գեւորգ Աբրահամյանը հաղորդում է.**

Օգոստոսի 1-ին Մոսկվայում, լրագրողի կենտրոնական տանը տեղի ունեցած ասուլիսը նվիրված էր «Պրոստ» նորվեգական ֆիրմայի տնօրեն Անդրեյ Կլեմենտեւին Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Բորիս Նեմցովի կողմից ներկայացված մեղադրանքին: Դատարանի դահլիճից ազատ արձակված Կլեմենտեւը Վլադիմիր Ժիրինովսկու պատրոնաժի ներքո ասուլիսի ընթացքում Նեմցովին մեղադրեց վարկեր յուրացնելու, կաշառակերության մեջ մեղադրանքն ամրագրելով տեսանյութերով եւ փաստաթղթերի մի հաստ կույտով:

Այս ամենին Վլադիմիր Վոլֆովիչը ավելացրեց, որ Նեմցովը նաեւ տեռորիստ է, քանի որ մարդ է ուղարկել իրեն սպանելու համար. «Նրանք արդեն օդտիկական նշանառությամբ հրացան էին գնել եւ մարդասպանին նստեցրել էին հարմար տեղում, որտեղից միտինգի ժամանակ ինձ սպանի: Սակայն մարդասպանը, լսելով իմ ճառը, թեւաթափ է եղել: Միտինգից հետո նա մոտեցավ ինձ, խոստովանեց եւ ինձ հանձնեց հրացանը»:

Սա պատմելուց հետո, Ժիրինովսկին իմիջիայլոց նշեց, որ Ռուսաստանի կառավարությունում պատրաստվում են կովկասյան նոր պատերազմի. «Դրա համար նրանք արդեն զենք են նախապատրաստել: Այս պատերազմը երկիրը վերջնականապես քայքայելու համար է»:

Ըստ երեւույթին ՌԼԴԿ-ի ղեկավարը նկատի ունի կամ օտինգուբական, կամ էլ աբխազական ուղղությունը: Վերջինի կողակցությամբ իրադրությունը լրջանում է Ռուսաստանի ԱԳՆ հուլիսի 31-ի հայտարարության լույսի ներքո: Ինչպես հայտնի է, բրիֆինգում Ռուսաստանի ԱԳՆ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի տնօրեն Գենադի Տարասովը հայտարարեց, որ եթե ռուսական խաղաղարար զորքերը դուրս բերվեն աբխազական հակամարտության գոտուց, ապա դաշտեր պատերազմ կվերսկսվի նոր, ավելի մեծ չափերով:

Քյոփազի շահագործման համաձայնագիրը չեղյա՞լ

Հուլիսի 31-ին Ռուսաստանի պետական «Ռոսնեֆտ» նավթային ընկերությունը հայտարարել է, թե որոշել է չեղյալ համարել Ադրբեջանի «Քյափազ» նավթահանքը շահագործելու նպատակով հուլիսի 4-ին ստորագրված 1 մլրդ դոլարի համաձայնագիրը:

Ինչպես հայտնի է, նշյալ համաձայնագրի ստորագրությունից հետո Թուրքմենստանի ղեկավարությունը հայտարարել էր, թե նավթահանքը գտնվում է Թուրքմենստանի տարածքում: 50 մլն տոննա նավթ պարունակող այս հանքից նավթարդյունաբերության ծախսերը եւ եկամուտները պիտի բաժանվեին Ադրբեջանի «Սոկար» (50%), ռուսական «ԼՈՒԿՈՅԼ» (30%) եւ «Ռոսնեֆտ» (20%) ընկերությունների միջեւ: Այս վերջինի որոշումը նշանակում է, թե համաձայնագիրը չեղյալ է, եւ շահագործության դեպքում «ԼՈՒԿՈՅԼԸ» պետք է նոր բանակցություններ սկսի «Սոկարի» հետ:

Միաժամանակ Թուրքմենստանի նախագահ Սափարմուրատ Նիյազովը հայտնել է, որ թուրքմենական կողմը մտադիր է առաջիկա օրերին ԱՄՆ Հյուսիսն Քաղաքում անցկացնել միջազգային տենդեր նշյալ (թուրքմենական տարբերակով «Սերդար») հանքավայրի շահագործման համար: Ի դեպ, ըստ «Նեզավիսիմայա գազետա» թերթի, անհասկանալի է, թե ինչպես է առանց համապատասխան գերատեսչական փորձաքննության ռուս-ադրբեջանական փաստաթղթերի փաթեթում հայտնվել «Քյափազ» նավթահանքի մշակման մասին համաձայնագիրը, երբ եւ Ադրբեջանը, եւ Ռուսաստանը առանձնաբար ճանաչում են տվյալ տարածքում թուրքմենական իրավասությունը:

«ԵՐԵՎԱՆ»

ՀԱՍՏԱՍՈՏ

Մալարիա Հարավային Ադրբեջանում

ԲԱՔՈՒ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես գրել է Բաքվի «Եդի գյուն» թերթը, Ադրբեջանի հիգիենայի եւ համաճարակաբանության կենտրոնի մասնագետների 12 խումբ է մեկնել մալարիայով բռնկված գոտիները: Ընթացիկ տարվա առաջին վեց ամիսների ընթացքում երկրում գրանցվել է մալարիայով հիվանդանալու 5504 դեպք: Հուլիսի առաջին 20 օրերին մալարիայով վարակվել է 1326 մարդ: Հարավային Ադրբեջանի Ֆիզուլիի, Բիլասուվարի, Լենքորանի, Իմիշլիի եւ կենտրոնական Ադրբեջանի Գյոքչայ շրջանների բնակչության 52,3 տոկոսը վարակված է այդ հիվանդությամբ:

Թբիլիսի-Մոսկվա գնացքը՝ Բաքվով

Ըստ «Նեզավիսիմայա գազետայի», հնգամյա ընդմիջումից հետո, օգոստոսի 5-ին, կգործարկվի երկաթուղու Թբիլիսի-Մոսկվա ուղեւորական չվերթը: Վրաստանի երկաթուղային դեպարտամենտը հայտնել է, որ գնացքը կանցնի Բաքվով, ուղեւորությունը կտեւի 55 ժամ: Ուղերթի վերականգնումը հնարավոր է դարձել հուլիսի 25-ին Չեչնիայի տարածքը շրջանցող նոր երկաթուղու բացումից հետո:

Մարդահամար Թուրքիայում

Հուլիսի 31-ին Թուրքիայի խորհրդարանից տեղեկացրել են, թե խորհրդարանը վավերացրել է նոյեմբերի 30-ին մարդահամար կատարելու առաջարկը: Ըստ նույն աղբյուրների, մարդահամարը առաջիկա ընտրությունների նախապատրաստություն է:

Հայտնի է, որ վարչապետ Մեսութ Յըլմազը խոստացել է վաղաժամկետ ընտրություններ անցկացնել՝ չսպասելով նախապես որոշված 2000 թվականին:

«ԵՐԵՎԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ջրասույզ կարվի ռուսական 12 միջուկային սուզանավ

Խաղաղօվկիանոսյան նավատորմի ռուսական հնացած 12 միջուկային սուզանավեր մոտ ժամանակներս հավանաբար ջրասույզ արվեն: Դրանք իրենց միջուկային ռեակտորներով հանդերձ կընկղմվեն Կամչատկայի Պետրոպավլովսկ քաղաքի ռազմածովային հենակետի մոտակայքում: «Էխոր-ռես» հանդեսի տեղեկատվության համաձայն, ՌԴ խաղաղօվկիանոսյան նավատորմի հրամանատար Վլադիմիր Կուրոեդովը անձամբ այս կարգադրությունն է արել մայիսի վերջերին ռուսական միջուկային մի սուզանավի վթարից հետո, որը խորտակվել էր մանեւրելու պահին: Կոռոզիայի հետեւանքով լրջորեն քայքայված սուզանավը նեկայումս իր միջուկային վառելիքով հանդերձ գտնվում է 20 մետր խորության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ Վարդենիկ գյուղի «Սանասար 72» սպասարկման կոոպերատիվը փակվում է:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սենյականոց բնակարան 5 հարկանի խարե շենքի 5-րդ հարկում, Փ. Բյուզանդի 1, բն. 12 (Վերնիսաժի հարեւանությամբ):
Հեռախոս՝ 52-67-23

Օգոստոսի 1-ից սկսվում է
«Սերմեր»
առեւտրա-արդյունաբերական միավորման եւ
«Սորսերմբանջար»
փակ բաժնետիրական ընկերության պահեստներից ԱՄՆ-ից ներկրված սիլոսային եգիպտացորենի ախտահանված սերմացուի ազատ վաճառք:
Գինը. 1 կգ՝ 50 դրամ:

Ուշադրություն

«Հայկական ավիաուղիներ» ավիաընկերությունը

իրականացնում է չվերթ

Երեւան-Խարկով-Երեւան

ամեն հինգշաբթի

Տոմսերը ձեռք բերեք «Հայկական ավիաուղիների» քաղաքային գրասենյակում կամ տուրիստական գործակալություններում

Հասցեն՝ Մոսկովյան 18, հեռ. 58-39-69

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով: 589167, 581351:

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեր 633. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 1.08.1997. Գինը՝ 100 դրամ